

ԻՎԱՆ ԹՈՒՐԿԵՆԵՎ

ՅԱՂԹԱԿԱՆ ՍԻՐՈՅ ԵՐԳԸ

Թարգմ. Պ. ՇՔԻՐՋԵԱՆ

(Արտասպուած «Անահիտ» էն)


ԳԻՆ՝ 25 ՄԷՆԹ

1932

Տպարան Յ. Բ. ԹԻՒՐԱՊԵՂՆ

227, Bd. Raspail, 227

PARIS



4
207

ԻՎԱՆ ԹՈՒՐԿԵՆԵՎ

1999

ՅԱՂԹԱԿԱՆ ՄԻՐՈՅ ԵՐԳԸ

Քարգմ. Պ. ՇԵՔԻՐՁԵԱՆ

(Արտասպուած «Անահիտ» էն)

ԳԻՆ 25 ՍԷՆԹ

1932

Տպարան Յ. Բ. ԹԻՒՐԱԳԵԱՆ
227, Bd. Raspail, 227
PARIS

ԵՐԿՐՈՒԹ



Այս հատորը սիրան երեւոյք մըն է ժամանակակից հայ գրականութեան բարգմանածոյ նիւլին կառուածին մէջ :

Երկու իրողութիւններ աչքի կը զարնեն . . Առաջինը ա'յն թէ քարգմանիչն է մեր ամերիկաբնակ ազգայիններէն Պ. Շէլքրջեան, համեստ այլ յաշողակ արհեստաւր մը, որ իր գործին ու շահուն բովանդակ անձնով նուիրուելէն զատ ժամանակ գտած է զրականութեամբ զբաղելու, կարդալու, ընտրելու, եւ ոչ այսչափ միայն, այլ եւ քարգմանելու եւ հրատարակելու:

Գրական շարժման մասնակցութեան մէջ Պ. Շե-
ֆէրքեանի ցոյց տուած եռանդը ա'լ աւելի զնահատելի
կ'ըլլայ , երբ նկատի առնուի քէ գրասէր արհեստաւորը
մասնագիտական երկ մը չէ որ քարգմանութեամբ հրա-
պարակ հանած է , այլ խորապէս գրական եւ , մանա-
ւանդ , ոռս գրականութեան արբնամիտ տիտաննե-
րէն՝ Խվան Թուրկեննեվի հոգերանական , վերլուծող
վիպակներէն մէկ քանին հայացուցած է ընտիր լեզուով
եւ հեշտին ռնով մը , որոնք քարգմանչին հմտութեան
հետ ցոյց կուտան նաև անը գրական հաշակին բարձ-

*Printed in France
BY TURABIAN PRESS
227, Boulevard Raspail
PARIS 14e*

28-244

207-28

բութիւնը: Այս տեսակէտը աւելի կը շեշտուի երբ դիտել տամիք թէ մեր գրականութեան արդի «արտասահմանեան» շրջանին մէջ թարգմանածոյ երկեր, մինչեւ իսկ պարզ յօդուածներ յանախ գուրկ են բնագրին կամ հեղինակին նշգրիտ հասկացողութեան շնորհներէն: Այդ շնորհը կայ Շէֆէրջեանի թարգմանութեան մէջ՝ հակառակ ունէ թարգմանչի համար սա՛ աննպաստ պարզացին որ պարտաւրուած կ'ըլլայ թարգմանութենէ մը թարգմանել իր կարգին, ինչպէս ըբած է Պ. Շէֆէրջեան, Թուրլենենվը հայացնելով անգլիերէն թարգմանութենէն:

Աչքի զարնող երկրորդ իրողութիւնն է Շէֆէրջեանի ընտրած հեղինակը: Քառորդ եւ աւելի դարէ աւելի է որ հիւսիսական գրականութիւններուն մէջ խորժով ու նիւթով իսկատիւլ դրոշմ ներկայացնող ուսւ գրականութիւնը մեր նախապատերազմեան եւ յետպատերազմեան սերունդին մէջ ոչ միայն պարզ ընթերցող, այլև հետեւելու ջանադիր լայն շրջանակ մը ունեցած է: Կովկասի մեր արխասիրտ եղբայրներուն մըշակած գրականութեան աղբիւրը ուսւականը ըլլալով՝ անոնց մուտքիր ու եռանդագին ընթերցումը սիրելի ընծայեց նոր սերունդին նոյն աղբիւրին մայր ակունքը – ուսւականը, այնպէս որ շատ երկար ատենէ ի վեր լատինական գրականութեան յաւիտնական դասականութենէն եւ անգլիսական գրականութեան մերժմասիօն եւ մերք ծայրայեն գործնականամիտ դեզերտումներէն յափրացող հայ գրական ու գրասէր երիտասարդութիւնը ակնյայտնի հակում մը կ'ունենար ուսւ մեծ միտքերու կողմը, որոնք լուսաւոր եւ շացիկ յայտնութիւններ եղած էին նաև համաշխարհային գրականութեան համար: Այդ հոյակապ միտքերէն

մին է իվան Թուրկենեվ, ուսւ գրականութեան արձակագիր Խւկօն, որուն պարզ պատմուածքներէն իսկ զըրական նշմարիտ առուներ կը հոսին: Եւրոպական վիպային – գասական խառնուածքն շատ հեռի, առարկային հետ ապրող, նկարագրութեան ընթացքին առարկան խորացնող, հոգիացնող գրական մեծ դարրին մըն է, ուկեծոյլ արուեստին աննման վարպետ մըն է Թուրկենեվ: Տօսրոյէկսի, Մաքսիմ Կորքի, Թուրկենեվ՝ ուսւ գրականութեան ողիմպոսեան մոգին՝ Թուրլուրոյին հետ կրնան դիմագրաւել դարերու նաշակին եւ ապրումներուն, իրենց նկարագրած, իրենց շօշափած նիւթերուն իսկը կրցած են գերել բովքի մէջ, կապել կաշկանդել զայն հալոցարամի մէջ: Դուրսը բան չէ մնացած: Այնին բարձրութեան մէջ նոյնքան պարզ կը մնաս, կը կարդաս զանոնի եւ չես զգար վերացում, պատրանք, գլխու պառոյս, այլ միշտ առարկայէն անրաժան, անոր զարմանալի փոփոխութիւնները անգամ բնական կը գտնեն, անգիտակից այն դերբուկներուն՝ որոնց լերկ ու դժուարին առլեփներէն վեր կը հանեն թեզ, մինչեւ որ յետին բավկին յանկարծ լագուարք երկնին մը զով երդիին տակ բարձրադիր գագարի մը վրայ կը գտնեն ինիքինեվ, պաղպաջուն հորիզոններու դէմ:

Պ. Շէֆէրջեանի ներկայ երկին յաղթական կնիքը, մեր համեստ կարծիքով, կը կայանայ այն նոր հրապարյին մէջ, զար ան կուգայ տալ մէզի ուսւ գրականութեան մասին, անոր շէնդ դէմքերէն մէկուն քանի մը երաշակերտները թարգմանելով. Խնդիր չէ թէ նոյն իսկ մեծագոյն պատկերները չըլլան անոնք այդ գրականութենէն, կը բաւէ որ անոնք կը նորոգեն նաշակը եւ երկարեայ ամրութիւնը ընդհանրապէս ուսւական

Եւ մասնաւրաւպէս կովկասեան միտքին, ոյսուն հետ
հետզիետէ կը բաւի թէ անժակտելի ագոյցքներով պի-
տի զօդուի, յօդաւորուի Հայ Միտքը, այն նակառո-
գիականութեամբ, որմէ արագ արագ կը մդաւի մեր
ցեղին Քաղաքական ապագան դէպ ուուսական առանց-
քը:

Խնչո՞ւ նաեւ ոչ դէպ ի ուուսական գրականութիւ-
նը . . . :

Այս թէ շատերու համար ի՞նչ բարևմոյն դիպ-
ուած մըն է Պ. Շեքերջեանի այս հատորը:

ԵԲ. Տ. ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

Փարիզ, 5 սեպտ. 1932

ՅԱՂԹԱԿԱՆ ՍԻՐՈՅ ԵՐԳԸ

Ա.

Այս այն է, ինչ որ կարդացի
մի հին իտալական ձեռագրում:

Տասնեւվեցերորդ դարի գրեթէ միջում, Ֆերրա-
րայում, (այդ ժամանակ սա ծաղկում էր մականի ներ-
քոյ իր մեծագործ արքիդուքսների, որ պաշտպան էին
գեղարուեստների եւ բանաստեղծութեան), ապրում
էին երկու երիտասարդներ, Ֆաբիո եւ Մուծծիօ անու-
նով: Նրանք միեւնոյն տարիքից, եւ մերձաւոր ազգա-
կան էին, ու հազիւ թէ երբ եւ է բաժանուած. մի ա-
մենաշերմ գուրգուրանք, մանկութեան օրերից միա-
ցրել էր նրանց: Նրանց յար եւ նման դիրքը ամրապն-
դել էր այդ կապը: Երկուքն էլ պատկանում էին հին
գերդաստանների. երկուքն էլ հարուստ էին, անկախ,
եւ առանց ընտանեկան կապանքների. երկուսի մէջ էլ
ճաշակն ու հակումները համանման էին:

Մուծծիօն նուիրուած էր երաժշտութեան, Ֆա-
բիօն՝ նկարչութեան:

Ամբողջ Ֆերրարայում նրանց վրայ հպարտութեամբ էին նայում . որպէս զարդարանքներ արքունիքին, ընկերութեան եւ քաղաքին: Սակայն, այսու ամենայնիւ, երեւոյթով նրանք միմեանց չէին նմանում, թէեւ երկուքն էլ նշանաւոր էին մի շնորհալի եւ առոյդ գեղեցկութիւնով:

Ֆարիօն բարձրահասակ էր, բացդոյն դէմքով, վուշի դոյն մազերով եւ կապոյտ աչքերով:

Մուծծիօն, ընդհակառակն ունէր թուխ դէմք, սեւ մազեր, եւ իր մութ շաղանակագոյն աչքերում չկար զը-արթ պայշտառութիւնը, եւ ոչ էլ իր շրթներում՝ հաճելի ժամանակ ունեղոյն արտեանունքները կազմում էին նուրբ կիսաշրջանակ իր մաքուր ողորկ յօնքերի ներքեւ: Խոսակցութեան մէջ եւս, Մուծծիօն նը-ազ ողեւորեալ էր:

Այդ բոլորի համար, երկու բարեկամներն էլ նոյն-քան նպաստաւոր տպաւորութիւն էին գործում տիկին-ների վրայ՝ որպէս տիպարներ ասպետական քաղաքա-վարութեան ու վեհանձնութեան:

Միենոյն ժամանակ, Ֆերրարայում ապրում էր մի աղջիկ, Վալերիա անունով: Նա համարւում էր քաղաքի ամենաերեւելի գեղեցկուհիներից մէկը. թէեւ շատ քիչ անգամ կարելի էր տեսնել նրան, որովհետեւ նա ապրում էր մի առանձնացած կեանք եւ երբեք գուրս չէր ելնում, բաց ի եկեղեցի գնալուց եւ մեծ տօնի օրերին մի պտոյտ կատարելուց: Նա ապրում էր իր մօր հետ, մի այրի կին՝ ազնուական ընտանիքից, թէեւ փոքրիկ հարստութիւնով, եւ որը ուրիշ զաւակ չունէր:

Ամէն նրանց որ հանդիպում էին Վալերիային, նա

ներշնչում էր ակամայ հիացման մի զգացողութիւն, եւ նոյնքան ակամայ խանդաղատանք եւ յարգանք, այն-քա՞ն համեստ, այնքա՞ն գողարիկ էր իր կերպարանքը: Կարծես թէ նա իրազեկ էր իր սեփական հմայքի բովանդակ ոյժին:

Ոմանք, ճշմարիտ է, դտնում էին նրան մի քիչ գունատ. նրա աչքերը, գրեթէ միշտ վայրահակ, արտայայտում էին մի որոշ ամօթիսածութիւն եւ նոյն իսկ երկշնուրութիւն: Նրա շրթները հազուադէպօրէն ժըպտում էին, եւ այն էլ միայն նուազկոտ կերպով: Նրա ձայնը քիչ անդամ ունէ մէկը լսում էր: Բայց տարածայնուել էր, թէ նա շատ գեղեցիկ էր եւ թէ փակուած իր սեփական սենեակում, առաւօտ կանուխ, երբ տակաւին ամէն բան քաղաքում նիբռնում էր, նա սիրում էր երգել հին երգեր ընկերակցութեամբ վինի որի վրայ երբեմն իսկ անձամբ նուազում էր:

Հակառակ իր դալկութեան՝ Վալերիա ծազկում էր առողջութեամբ, եւ նոյն իսկ ծերացած մարդիկ, որ նայում էին նրա վրայ, չէին կարող չմտածել. «Օ՛, ինչքա՞ն երջանիկ է լինելու այն երիտասարդը, որի համար այդ անարատ կոյս կոկոնը, տակաւին փակուած՝ իր թերթերի մէջ, պիտի մէկ օր բացուի ու դառնայ լիափիթիթ ծաղիկ»:

F.

Ֆարիօն եւ Մուծծիօն տեսան Վալերիային առաջին անգամ մի չփեղ հանրային հանդիսում որ տրւում էր հոչակաւոր Լուկրեցիա Բորջիայի որդուն՝ Ֆերրարայի արքիդուքս էրքոլի հրամանով ի պատիւ մի քանի

մեծանուն աղնուականների, որոնք Փարիզից եկել էին Հրաւէրով արքիդքսուհուն որ գուստըն էր Ֆրանսայի թագաւոր լուի ԺԲ.ի: Վալերիան նստել էր իր մօք կողքին, մի գեղափարթամ բեմի վրայ, որը կառուցուել էր Բալլագիոյի մի գծագրութեան համեմատ, Ֆերարայի գլխաւոր Հրապարակում, քաղաքի ամենապատուաւոր տիկինների համար:

Ֆարիօն եւ Մուծծիօն, երկուսն էլ նոյն օրը խանդագին կերպով սիրահարուեցան նրա վրայ. եւ քանդի բնաւ միմիանցից ունէ գալստնիք չէին պահում, նրանցից իւրաքանչիւրը իսկոյն իրազեկ եղաւ թէ ի՞նչ էր անցնում իր բարեկամի սրտում: Նրանք իրանց մէջ համաձայնուեցին, որ երկուսն էլ փորձեն ծանօթութիւն հաստատել Վալերիայի հետ եւ եթէ նա չորհ անէ ընտրել նրանցից մէկին, միւսը հնթարկուի նրա ոռոշումին՝ առանց մրմունջի:

Մի քանի շաբաթ յետոյ, չնորհիւ այն գերազանց համբաւին որ նրանք արժանապէս վայելում էին, յաջողեցան մուտք գտնել այրի կնոջ տունը, թէեւ դրսար էր այնտեղ մտնելու արտօնութիւն ստանալ. նա թոյլ տուաւ նրանց այցելել իրան:

Այդ ժամանակից սկսած նրանք կարողանում էին դրեթէ ամէն օր տեսնել Վալերիային եւ խօսել նրա հետ. ու իւրաքանչիւր օր սէրն ու ցանկութիւնը երկու երիտասարդների սրտերում վառուելով աւելի եւ աւելի ուժեղանում էր: Վալերիան, այսու ամենայնիւ, նախընտրութիւն ցոյց չտուեց նրանցից եւ ոչ մէկին, թէեւ նրանց ընկերութիւնը բացայայտ կերպով ախորժելի էր նրա համար:

Մուծծիօն հետ նա զրազւում էր երաժշտութեամբ, բայց նա աւելի խօսում էր Ֆարիօն հետ, նրա հետ նա նուազ երկչու էր:

Վերջապէս, նրանք որոշեցին միանգում ընդ միշտ իմանալ իրանց բազգի. եւ ուղարկելով մի նամակ Վալերիային, նրանք խնդրեցին նրանից, որ իրանց հետ պարզ լինի, եւ ասէ թէ որի՞ն նա պատրաստ է տալու իր ձեռքը:

Վալերիան ցոյց տուաւ այս նամակը իր մօրը, եւ յայտնեց նրան թէ ինք կամենում է մնալ ամուրի, բայց եթէ իր մայրը նկատում է որ ժամանակն է իր համար ամուսնանալու, ապա նա կ'ամուսնանայ որի հետ որ իր մայրը ընտրէ:

Աղնիւ այրի կինը մի քանի արցունք թափեց, մտածելով որ բաժանուելու էր իր սիրեցեալ զաւակից, սակայն, չկար մի բանաւոր պատճառ մերժելու նրա ձեռքն ուղղուերին: Նա հաւասարապէս երկուսին էլ համարում էր արժանի իր դստեր ամուսինը լինել: Բայց, որովհետեւ նա զարդարապէս ընտրել էր Ֆարիօն, եւ կասկածելով որ Վալերիան նրան աւելի շատ էր սիրում, նա ընտրեց նրան:

Յաջորդ օրը Ֆարիօն իմացաւ իր բարեբազզութիւնը, մինչդեռ Մուծծիօն մնում էր միայն պահել իր խօսքը եւ գլուխ ծոնել:

Եւ նա այդ արեց: Բայց ականատես լինել իր բարեկամի եւ մրցակցի յաղթութեան, այդ աւելի ծանր էր քան ինչ որ կարող էր տանիլ: Նա իսկոյն ծախեց իր կալուածների մեծ մասը, եւ հաւաքելով մի քանի հաղար դուկատ, որոշեց ճամբորգել դէպ ի հեռաւոր Ա-

բեւելքը: Երբ նա ֆարիօին հրաժեշտ տուեց, ասաց նրան, որ ինք չի վերադառնալու մինչեւ որ դդայ թէ իր սիրոյ վերջին նշոյլն անհետացել է իր սրտում:

Ֆարիօի համար կոկծալի էր բաժանուել իր մանկութեան եւ երիտասարդութեան օրերի բարեկամից . . . բայց բերկրալի նախատեսութիւնը մօտեցող երջանկութեան՝ փութով կուլ տալ տուեց բոլոր միւս զգացողութիւնները, եւ նա ամբողջապէս անձնատուր եղաւ յաջող սիրոյ՝ յափշտակութեան: Քիչ յետոյ, նա Վալերիայի հետ տօնեց իր պսակի արարողութիւնը, եւ միայն այն ժամանակ իմացաւ ամբողջ արժէքն այն դանձի որ իր բաղդն էր եղել ստանալ: Վալերիան ունէր մի զմայլելի ամարանոց, մի ստուերամած պարտէզով, ֆերրարայից քիչ հեռու: Նա իր կնոջ եւ մօր հետ փոխազդուեց այնտեղ:

Ապա, մի երջանկութեան շրջան սկսուեց նրանց համար:

Ամուսնական կեանքը մի նոր եւ հմայիչ լոյսի մէջ ի յայտ բերեց Վալերիայի բոլոր կատարելութիւնները:

Ֆարիօն դարձաւ մի նշանաւոր արդիստ. այլ եւս մի պարզ սիրող նկարիչ չէր, այլ մի իրական վարպետ:

Վալերիայի մայրը ցնծութեամբ չնորհակալութիւն էր յայտնում Աստուծուն երբ նայում էր երջանիկ դոյդի վրայ:

Չորս տարիներ անցան աննշմարելի կերպով, մի հեշտալի երազի նման: Միայն մէկ բանի կարօտում էր երիտասարդ դոյդը, մի պակասութիւն՝ որ ինչողէս մի վեշտ նրանց ողբար էր տալիս: Նրանք պաւակ չունէին . . . բայց բոլորովին յոյսերնին կտրած չէին:

Չորրորդ տարուայ վերջերը, վրայ հասաւ մի մէջ եւ իրական վիշտ, Վալերիայի մայրը մի քանի օրուայ հիւմնդութիւնից յետոյ մեռաւ:

Վալերիան շատ արցունք թափեց, մի երկար ժամանակ նա չէր կարողանում բնտելանալ իր կորուստին:

Բայց մի տարի էլ անցու . . . կեանքը նորից հաստատել էր իր իրաւունքները, եւ հոսում էր իր հին ճամբարվակ: Եւ ահա, մի գեղցցիկ ամառնային երեկոյ, ամենքի համար անսպասելիօրէն՝ Մուծծիօն վերադարձաւ ֆերրարա:

Գ.

Ամբողջ հինգ տարուայ միջոցին, որ իր բաժանումից ի վեր անցել էր, ոչ ոք ոչինչ չէր լսել նրա մասին. ամէն խօսակցութիւն իր նկատմամբ մեռել էր, որպէս թէ նա անհետացած լինէր աշխարհի երեսից: Երբ որ ֆարիօն հանդիպեց իր բարեկամին ֆերրարայի փողոցներից մէկում, գրեթէ բարձրաձայն աղաղակեց, նաի՞ վրդովմունքից, յետոյ ուրախութիւնից, ու իսկոյն եւ եթ հրաւերից նրան իր ամարանոցը: Պատահեց, որ իր պարտէզում, տանից առանձին, գանւում էր մի ընդարձակ տաղաւար. նա առաջարկեց իր բարեկամին հաստատուել իր այս տաղաւարում: Մուծծիօն իսկոյն համաձայնուեց եւ միենոյն օրը փոխազդուեց այնտեղ իր ծառայի հետ, մի համբ, Մալայեցի, — համբ՝ բայց ոչ խուլ, եւ արդարեւ, դատելով իր արտայայտութեան արթնութիւնից, նա մի խիստ ուշիմ մարդ էր . . . Նրա լեզուն կտրուել էր: Մուծծիօն բերել էր իր հետ երկուտասնեակներով արկդներ, լեցուած ամէն տեսակ դան-

ձերով, որոնք իր կողմից հաւաքուած էին իր երկար ճամբորդութեանց ընթացքում :

Վալերիան ուրախացաւ Մուծծիօի վերադարձին համար : Մուծծիօն ողջունեց նրան զուարթագին բարեկամական զգացումներով, բայց հանդարտութեամբ. նրա ամէն մի շարժումից կարելի էր տեսնել, որ նա պահել էր ֆարիօին տուած իր խոստումը :

Օրուայ միջոցում նա կատարաելապէս ամէն բան դասաւորելով տաղաւարը կարգի գրեց, իր Մալայեցին օդնութեամբ. նա բայց արեց հետաքրքրական առարկաները, որ բերել էր իր հետ, գորգեր, մետաքսեայ նիւթեր, թաւչեղին ու ասեղնագործուած զգեստներ, զէնքեր, բաժակներ, պնակներ, թասեր, կիտուածանկարներով զարդարուած, իրեր՝ ոսկուց եւ արծաթից, մարգարիտներով զարդարուած, իրեր՝ ոսկուց եւ պերուզակներով ճոխացած. քանդակուած արկդիկներ յասպիսից եւ փլոսսկրից. կտրուած որուակներ, չիշեր, համեմներ, խունկեր, վայրի գաղանների մորթեր, անծանօթ թաշունների փետուրներ, եւ բազմաթիւ ուրիշ թանկագին բաներ, որոնց բուն գործածութիւնը թւում էր խորհրդաւոր եւ անըմբանելի :

Այս բոլոր թանկագին իրերի մէջ զտնում էր մի հարուստ մարգարտեայ մանեակ. նուիրուած Մուծծիօնին Պարսից թագաւորի կողմից, իր մի ինչ որ գաղտնի մեծ ծառայութեան համար : Նա Վալերիայից արտօնութիւն ինդրեց, որ այդ մանեակը իր սեփական ձեռներով նրա վզից կախէ : Նա զգաց որ մանեակը շատ ծանր էր եւ նրա մէջ կար մի տարօրինակ ջերմութիւն ... թւում էր թէ նա այրում էր իր մորթը : Երեկոյին,

ընթրիքից յետոյ, երբ նրանք նստել էին ամարանոցի պատշգամում, ստուերալից դափնեծաղիկների եւ սարդենիների հովանու տակ. Մուծծիօն սկսեց պատմել իր արկածները : Նա պատմեց հեռաւոր երկիրների մասին, որ տեսնել էր, ամպամած կատարներով լեռների եւ անապատների, ծովանման գետերի մասին : Նա պատմեց լայնածաւալ չենքերի եւ տաճարների, հազարամեայ ծառերի, ծիածանային երանդներով թլուշունների եւ ծաղիկների մասին :

Նա յիշատակեց այն քաղաքներն եւ ժողովուրդներն որոնց այցելել էր... նրանց անուններն իսկ մի դիւթական պատմութեան նման էին : Ամրող Արեւելքը ընտանի էր Մուծծիօնին : Նա ճամբորդել էր. Պարսկաստան, Արավիտուան, ուրտեղ ձիերը ազնիւ եւ աւելի գեղեցիկ են քան ուեէ ապրող արարածները : Նա թափանցել էր Հնդկաստանի մինչեւ սիրտը, ուրտեղ մարդկային ցեղը աճում է վեհաչուք ծառերի նման : Նա հասել էր Չինաստանի եւ Թիբեթի սահմանները ուրտեղ կենդանի աստուածը, Մեծ Լամա կոչուած, աշխարհի վրայ ապրում է նեղ աշքերով մի լուռ մարդու դիմակի տակ :

Հրաշալի էին իր պատմութիւնները : Ֆարիօն եւ Վալերիան, երկուսն էլ, հմայուած՝ լսում էին նրան : Մուծծիօի կերպարանքը իրապէս շատ քիչ փոխուել էր. նրա գէմքը մանկութիւնից թիստոյն լինելով, աւելի եւս թխացել ու այրուել էր մի աւելի կիզիչ արեւի ճառագայթների տակ : Իր աշքերը՝ երեւում էր որ աւելի խոր ընկած էին քան առաջ, եւ այդքան էր միայն փոփոխութիւնը, բայց իր գէմքի արտայայտութիւնը

աարբեր երեւոյթ էր ստացել. կեղընացել եւ ազնուացել էր: Եւ երբեք աւելի կենդանութիւն ցոյց չէր տալիս, քան երբ նա վերյիշում էր այն վտանգները, որոնց գէշերները պատահել էր անտառներում, ուր արձագանգում էին վագրերի մոնչեւնները, եւ կամ օրուայ մէջ ամայի ճանապարհներում՝ ուր վայրենի ֆանատիկուներ գարանակալ սպասում էին ճամբորդների՝ ըսպաններու համար նրանց ի պատիւ իրանց երկաթեայ աստուածուհուն, որը պահանջում է մարդկային զոհեր:

Եւ Մուծծիօի ձայնը աճել եւ աւելի խորացել էր. իր ճեռները, իր ամբողջ ժարմինը կորցրել էր համարձակ շարժումը, որ մասնայատուկ է իտալական ցեղին: Օգնութեամբ իր ծառայի, խոնարհամիտ, արթուն Մալայեցուն, նա ցոյց տուեց իր հիւրերին մի երկու ձեռնածութիւններ, որ ինք սովորել էր Հնդիկ Բրահմիներից: Այսպէս, օրինակի համար, սկզբում ինքն իրան թաղցնում էր մի վարագոյրի ետեւ, եւ ապա յանկարձակի երեւում էր նստած օդում, ոտքերը ծալապատիկ իր ժամաների ծայրով թեթեւօրէն սեղմելով հնդկական եղեգից մի գաւաղան՝ սւզդահայեաց դիրքում դըրուած. որը ոչ սակաւ ապշեցրել էր Թարիօին ու դրականապէս ահարեկել Վալերիային... «Միթէ՞ նա: մի կախարդ չէ», մտածում էր նա: Երբ որ նա շարունակելով սուլում էր մի փոքրիկ սրինդի վրայ, դուրս կանչելու համար ընտելացրած օձերի՝ ծածկուած մի կողովի մէջ, ուրաեղից նրանց թխագոյն, տափակ դըրուիները սարսոացնող լեզուներով երեւում էին մի մասնայատուկ գունաւոր ծածկոցի ներքոյ, վալերիան

սարսափահար լինելով՝ խնդրեց Մուծծիօից, որ, ինչքան կարելի է, շուտով մէկ կողմ դնէ այդ զզուելի արարածները:

Ընթրիփի ժամանակ, Մուծծիօն հրամցուց իր բարեկամներին Շիրազի գինի՝ մի կլոր, Երկարավիլ սըրուակով: Դա մի արտաքոյ կարգի բոյր եւ թանձրութիւն ունէր, մի ոսկեղէն գոյն՝ իր մէջ մի կանաչ չուքով եւ վայրում էր մի տարօրինակ պայծառութեամբ, երբ որ թափեւում էր մանրիկ յասպիս բաժակներում: Համով աարբերում էր եւրոպական դինիներից, չտքաղցր եւ հոտաւէտ էր. եւ խմելով կամաց, փոքր ումպերով, առաջացնում էր մի հաճելի թմբութիւն բոլոր անդամներում:

Մուծծիօն Թարիօին եւ Վալերիային խմցրեց մի բաժակ այդ գինուց, եւ մի բաժակ էլ ինք խմեց: Ծըռելով վար իր բաժակը, նա ինչ որ բան մրմնջաց, ու շարժեց իր մասները. Վալերիան այդ նկատեց: Բայց Մուծծիօի բոլոր կատարածներում, ամբողջ կենցաղում, մի ինչ որ սովորականից գուրս, օտարութի բան կար: Վալերիան մտածում էր. «Նա կարո՞ղ էր որդեգրած լինել մի ինչ որ նոր հաւատք հնդկաստանում, եւ կամ արդեօք այդ այնուղի սովորութիւնն էր»: Ապա, մի կարձ լսութիւնից յետոյ, նա հարցրեց նրան. «Ճամբորդութեան միջոցում պահե՞լ է իր սէրը երաժշտութեան»:

Մուծծիօն, պատասխանելով՝ հրամայեց Մալայեցուն բերել իր հնդկական ջութակը. այդ ջութակը, այժմեան մեջ ծանօթ ջութակների նման էր, բայց, փոխանակ չուրս լարերի, նա ունէր միայն երեք. վերեւի

207 - 22



մասը ծածկուած էր մի կապտագոյն օձի մոքթով, եւ եղեգնեայ բարակ աղեղը կիսալուսնի ձեւով էր. նրա ծայրագոյն եզրում փայլում էր մի սրածայր աղամանդ:

Մուծծիօն նախ նուագեց մի քիչ տիսուր եղանակներ, աղջային երգեր, ինչպէս ինքն էր անուանում նրանց, որ տարօրինակ եւ նոյն իսկ բարբարոսական էին թւում խոալական ականջին: Մեալային լարերի ձայնի հնչումը ողբագին եւ թոյլ էր, բայց Մուծծիօն սկսեց վերջին երգը, գործիքը յանկարծ մի նոր ուժ ստացաւ եւ հնչեց ներդաշնակութեամբ եւ զօրեղութեամբ: Խանդարուբռոք մեղեղին հոսում էր աղեղի լայն հարուածների ներքոյ, հեշտազմայլօրէն գալարուելով ու կծկուելով՝ ճիշդ օձին նման, որ փաթաթուել էր ջութակի կատարը: Եւ այնպիսի՛ կրակ, այնպիսի՛ յաղթական երանութիւն ցոլանում եւ այրում էր այդ մեղեղու մէջ, որ ֆարիօն եւ վալերիան իրանց սրտի ճմլուին զգացին եւ լաց եղան...մինչդեռ Մուծծիօն, գլուխը խոնարհած, եւ սերտ փարած ջութակին, այտերը գունատ, յօնքերը իրարու մօնեցած ու միակ ուղիղ գիծ կազմած, աւելի եւս ինքն իր մէջ կեղբոնացած եւ հանդիսաւոր էր երեւում: Եւ աղեղի ծայրում գտնուած աղամանդը լոյսի կայծեր էր արձակում - կարծես թէ այն էլ վառում էր երկնային երգի կրակով: Երբ որ Մուծծիօն վերջացրեց, եւ տակաւին ջութակը ամուր բռնած իր ծնօտի եւ ուսի մէջտեղում, վար ձգեց իր ձեռքը, որ բռնել էր աղեղը, «Ի՞նչ էր այդ, ի՞նչ էր այդ որ նուագեցիք մեղ համար», աղաղակեց ֆարիօն: Վալերիան ոչ մի խօսք չարտասա-

նեց - բայց նրա ամբողջ էութիւնը՝ երեւում էր որ արձագանգում էր իր ամուսնու հարցումին: Մուծծիօն դրաւ ջութակը սեղանին վրայ - եւ թեթեւ կերպով իր մազերը գէպ ի ետեւ նետելով, պատասխանեց մի քաղաքակարի ժպիտով. «Այդ մեղեղին, այդ երգը, ես մի անգամ լսեցի Սէլյանի կզկաւմ»:

«Այդ երգը, այնտեղ, մարդկանց մէջ, ծանօթ է, իբր երգը երջանիկ, յաղթական սիրոյ»: «Նուագի՛ր ալդ նորից», ֆարիօն մքմնջում էր: «Ո՞չ, նա այլ եւս չի կարելի նուագուել», պատասխանեց Մուծծիօն: «Բաց ի գրանից, այժմ շատ ուշ է: Սինեօրա վալերիան պէտք է որ հանգստանայ, եւ ժամանակն է, որ ես էլ հանգստանամ... Ես յոպնել եմ...»:

Ամբողջ օրուայ միջոցում, Մուծծիօն վալերիայի հետ յարգանքով եւ պարզութիւնով վարուեց, որպէս նախկին օրերի բարեկամ, բայց երբ զուրս զնաց, նա սեղմեց նրա ձեռքը շատ պինդ, ճգմելով նրա մատները իր ափի մէջ, եւ այնքան ուշագրութեամբ նայելով նրա երևսին որ թէ եւ նա իր արտեւանունքները չբարձրացրեց, սակայն եւ այնպէս նա զգաց նրա նայուածքը իր յանկարծակի այրուող այտերի վրայ:

Նա ոչինչ չասեց Մուծծիօնին, բայց մէկ կողմ թօթափեց իր ձեռքը, եւ երբ Մուծծիօն արդէն զնացել էր, ակնկառոյց կերպով նայեց զրանը, որից նա գուրս էր եկել: Յիշեց թէ ինչպէս ինքը մի քիչ վախենում էր նրանից, նոյն իսկ նախկին օրերում... եւ այժմ նա երկրայութիւնից նուածուած էր զգում իրան:

Մուծծիօն զնաց իր տաղաւարը, ամուսինն ու կինը իրանց ննջասենեակը:

۹۷

Վալերիան չկարողացաւ անմիջապէս քննանալ. Իր արեան մէջ, նուազկոտ ու թոյլ մի տեսչ կար, եւ իր ականջներում մի թեթեւ դանչիւն... այն տարօրինակ գինիից, որպէս նա ենթագրում էր. եւ զուցէ նաեւ Մուծծիօի պատմութիւններից եւ զութակով նուազումից...: Առաւօտեան դէմ նա վերջապէս ընկաւ քունի մէջ, եւ մի արտաքոյ կարգի երազ տեսաւ:

Նա երազեց, որ մանում էր մի ընդարձակ սենեակ, ցած առաստաղով . . . : Մի այդպիսի սենեակ, իր կեանքում բնաւ տեսած չէր. բոլոր պատերը ծածկուած էին քառակտուսի փայլուն աղիւսներով որոնց վրայ դժեր կային: Բարակ քանդակուած ալապաստք սիւները իրենց վրայ կրում էին մարմարեայ առաստաղը, առաստաղը ինքն իսկ եւ սիւները կէս - թափանցիկ էին թըւում . . . մի գունատ վարդագոյն լոյս բոլոր կողմէրից թափանցում էր սենեակի մէջ, նետելով մի խորհրդաւոր եւ միօրինակ շող բոլոր առարկաների վրայ: Ոսկեհուռ ասեղնագործուած բարձեր դրուած էին մի նեղ գորգի վրայ, տախտակամածի ճիշդ մէջուղում, որը ողորկ էր ինչպէս մի հայելի:

Անկեններում, գրեթէ անտեսանելի, ծխում էին
բարձրաբերձ խնկամաններ՝ հրէշային անսառւնների
բարձրաբանքով: Ոչ մի տեղում պատուհան չկար. մի
կերպարանքով: Ոչ մի տեղում պատուհան չկար. մի
դուռ առկախ, թաւշեայ վարագոյրով, անշարժ եւ լուս
մնում էր պատի մի առանձնացեալ խորշում: Եւ յան-
կարծակի, այդ վարագոյրը կամաց կամաց սահեց,
շարժուեց զեպ և մէկ կողմ... եւ նրա միջից դուրս ե-
կաւ Մուծծիօն: Նա գլուխ խոնարհեց, բաց արեց եր

բազուկները, ծիծաղեց . . . : Նրա մոլեգին բազուկները գրկեցին Վալերիայի մէջքը, նրա խանձող շրթները կիցեցին նրա բովանդակ մարմինը . . .

Նա ընկառ դէսլ իւ ետ բարձերի վրայ :

Երկար պայքարից յետոյ, սարսափից հեծելով Վա-
լերիան զարթնեց։ Տակաւին անիրազեկ լինելով թէ
ո՞ւր էր գտնւում եւ ի՞նչ էր պատահել իր հետ, նա
անկողնի վրայ ելաւ նստաւ ու նայեց իր շուրջը։

Մի սարսուռ անցաւ իր ամբողջ մարմնի վրայից . . .
Ֆարփօն պատկել էր իր կողքին։ Նա քնած էր, բայց
նրա դէմքը, պատուհանից ներս նայող փայլուն լիս-
լուսնի լոյսով, երեւում էր դիմակի նման գունատ . . . :
Նա աւելի տխուր էր, քան մի մեռած դէմք։ Վալերիան
զարթեցրեց իր ամուսնուն եւ ուղիղ նայեց նրան, «Ի՞նչ
է պատահել», բացազանչեց ֆարփօն։ Ես, ես, մի զար-
հուրելի երազ տեսայ», փափսաց Վալերիան տակալին
ամբողջ մարմնով դողալով։ Բայց այդ վայրիկեանին,
տաղաւարի ուղղութեամբ, գալիս էին երերուն ուժեղ
ձայներ, եւ ֆարփօն ու Վալերիան երկուսն էլ ճանաչե-
ցին այն մեղեղին, որ Մուծծիօն նուռաղել էր նրանց հա-
մար, կոչելով նրան «Երանաւէտ յաղթական սիրոյ եր-
գր»։

Գարիօն անձկութեամբ նայեց վալերիային...
վերջինս փակեց իր աչքերը եւ դարձաւ մէկ կողմ...
ու երկուքն էլ իրանց շունչը բոհ ելով լսեցին երգը մին-
չեւ վերջաւորութիւնը :

Մինչդեռ վերջին նօթվը մեռնում էր, լուսինը անցաւ մի ամպի ետեւ, որից յետոյ, յանկարծակի, սենեկը մթագնեց . . . :

Երկու երիտասարդ անձերը, իրանց պլուխները խորասուղեցին բարձերի մէջ, առանց փոխանակելու մի խօսք. եւ նրանցից ոչ մինը չնկատեց՝ երբ միւսը քնի մէջ ընկաւ:

Ե.

Յաջորդ առաւօտ Մուծծիօն նախաճաշի եկաւ: Նա երեւում էր երջանիկ եւ ոլջունեց Վալերիային զըւարթօրէն: Վալերիան պատասխանեց նրան շվոթութեամբ, գողունի մի ակնարկ ուղղելով նրան, եւ տահրեկուած զգաց իրան՝ տեսնելով նրա պայծառ, երջանիկ դէմքը ու նրա խորաթափանց, խուզարկու աչքերը: Մուծծիօն սկսում էր նորից մի ինչ որ պատմութիւն առելու... բայց Թարիօն ընդհատեց նրան հէնց տոաջին խօսքից:

«Ես տեսնում եմ, որ դու չես կարողանում քնել քո նոր կայանում: Կինո եւ ես լսեցինք, որ նուազում էր երէկ գիշերուան երդը»:

«Այո՛, լսեցի՞ք դուք, ասաց Մուծծիօն, ես, արդարեւ, նուազեցի այն կտորը, բայց զբանից առաջ, ես քնել էի, ու տեսել մի զարմանալի երազ էլ:

Վալերիան լարուած լսում էր: «Ի՞նչ տեսակ երազ» հարցրեց Թարիօն: «Ես երազեցի, պատասխանեց Մուծծիօն, ասանց իր աչքերը վերցնելու Վալերիայի վրայից, թէ մտնում էի մի ընդարձակ յարկաբաժին՝ արեւելեան ձեւով զարդանկարուած առաստաղով. քանդակուած սիւները պահում էին առիքը, պատերը ծածկուած էին քառակուսի փայլուն աղիւներով, եւ թէ ոչ պատուհաններ ոչ էլ ճրագներ կային, ամբողջ սեն-

եակը լեցուած էր մի վարդագոյն լոյսով, ճիշդ այնպէս, որ կարծես թէ ամբողջը կաւուցուել էր թափանցիկ քարերից: Անկիւններում, չինական ինկամաններ ծխում էին. տախտակամածի վրայ զետեղուած էին ոսկեհուռ ասեղնազործուած բարձեր, մի նեղ գորգի վերեւ: Ես ներս մտայ մի գռնից, որ ծածկուած էր մի վարպոյրով, եւ զէպի մի ուրիշ, ճիշդ հանդիպակաց զռնից երեւեցաւ մի կին, որին ես ատենով սիրել էի: Եւ նա աշխան գեղեցիկ էր երեւում ինձ, որ ես ամբողջութեամբ բոցավառում էի իմ հինօրեայ սիրով...»:

Մուծծիօն նշանակալից կերպով ընդհատեց: Վալերիան նստած էր անշարժ, եւ աստիճանաբար զառնում էր գունատ... ու քաշում էր շունչը աւելի կամաց: «Ապա, շարունակեց Մուծծիօն, ես զարթնելով նուազեցի այն երդը»:

«Բայց ո՞վ էր այն կինը», ասաց Թարիօն:

«Ո՞վ էր նա: Մի Հնդիկի կինը: Ես հանդիպեցի նրան Դէլհի քաղաքում... նա այժմ չի ապրում, մեռած է»:

«Եւ նրա ամուսինը», ասաց Թարիօն, առանց իմանալու թէ ի՞նչու տուաւ այդ հարցումը:

«Նրա ամուսինը, նոյնպէս, ասում են, որ մեռել է: Ես շատ չանցած, նրանց երկուսին էլ հետքը կորցրի:

«Տարօրինակ է, նկատեց Թարիօն, իմ կինն էլ երէկ զիշեր մի արտաքոյ կարգի երազ էր տեսել...»:

Մուծծիօն մի գիտաւորեալ ակնկառոյց նայուածք ուղղեց Վալերիային.

— «... Որի մասին նա ինձ ոչինչ չի ասել» — աւելացրեց Թարիօն:

Բայց այս միջոցին, Վալերիան ստքի ելնելով՝
սենեակից զնաց դուրս : Նախաճաշից անմիջապէս յե-
տոյ, Մուծծիօն նոյնպէս մեկնեցաւ, բացատրելով որ
ինք գործով պէտք է Ֆէրարա զնար եւ թէ երեկոյէն
առաջ չի վերադառնար :

Զ.

Մուծծիօն վերադառնալուց մի քանի շաբաթ ա-
ռաջ, Ֆարիօն սկսել էր նկարել իր կնոջը : Նկարում էր
նրան, Սրբուհի Զեչիլիայի երեւոյթին տակ : Նա իր
արուեստին մէջ կարեւոր առաջդիմութիւն էր արել.
Հոչակաւոր լուինին, Լէոնարդօ դա Վինչիի աշակերտ-
ներից, Ֆէրարայից դալիս էր իր մօտ եւ օգնում էր
նրան իր սեփական խորհուրդներով, եւ տալիս էր նրան
իր մեծ վարպետի պատուէրները : Նկարը գրեթէ ամ-
բողջապէս վերջացել էր, մնացել էր միայն՝ աւելացնել
մի քանի գծեր դէմքին վրայ . Եւ Ֆարիօն մեծապէս կա-
րող էր հպարտանալ իր ստեղծագործութիւնով :

Մուծծիօն դէպի Ֆէրարա ճանապարհութիւնը տես-
նելուց յետոյ, նա վարձաւ իր արուեստանոցը, ուրտեղ
Վալերիան սովորաբար նրան սպասում էր . բայց այն-
տեղ չգտաւ նրան . կանչեց նրան, նա չպատասխանեց :
Ֆարիօն նուաճուեց մի զաղանի անհանգստութիւնից,
սկսեց որոնել նրան : Նա տանը ոչ մի տեղում չէր : Ֆա-
րիօն վագեց դէպի պարտէղը, եւ այնտեղ, ամենից մե-
կուսացած ճեմավայրերից մէկում իր ուշադրութիւնը
դրաւեց Վալերիայի տեսքը :

Նա նստել էր մի նստարանի վրայ, գլուխը խոնար-

հել էր կրծքին, եւ ձեռները ծալլել էր ծնկերի վրայ .
այն ինչ, իր ետեւում, մի նոճիի մութ կանանչից գաղ-
տագողի դուրս էր նայում մի մարմարեայ այծամարդ,
որ իր դէմքի վրայ մի չարամիտ ծամածուռ ժպիտով,
ծուած ըրթունքները գրել էր Պանի սրինդին վրայ : Վա-
լերիան յայտնապէս, ամոքուեց իր ամուսնուն երեւու-
մով, եւ այս վերջինին մտատանջ հարցումներին պա-
տասխանեց, որ մի թեթեւ գլխացաւ ունի, բայց թէ դա
մի անկարեւոր բան էր եւ թէ պատրաստ էր նրա համար
իբր մողել ծառայել :

Ֆարիօն առաջնորդեց նրան արուեստանոցը, դեռք
տուեց նրան, ու ձեռք առաւ իր վրձինը, բայց շատ նե-
ղացաւ նկատելով որ չէր կարող լրացնել դէմքը, որ-
պէս ինք ցանկանում էր : Եւ այդ ոչ թէ նրա համար,
որ նա մի տեսակ գումար եւ ուժասպառ էր երեւում
ո՛չ, այլ նրա համար, որ այն անմեղ, սրբանման ար-
տայայտութիւնը, որ ինք այնքա՞ն սիրում էր նրա
մէջ, եւ որը իրեն տուել էր գաղափարը նկարելու Վա-
լերիային, որպէս Սրբուհի Զեչիլիա, նա այդ օրը այդ
բանը նրա մէջ չէր գտնում :

Նա վերջապէս նետեց վար իր վրձինը, եւ ասաց իր
կնոջ թէ ինք աշխատելու արամագրութեան մէջ չէ, եւ
թէ նրան չի ուզում արգիլել հանգստանալու, որովհե-
տեւ նա բնաւ լսւ չէր երեւում . եւ դրաւ կտաւը վար,
երեսը պատին դարձած :

Վալերիան համաձայնուեց նրա հետ, որ ինք պէտք
է որ հանգստանայ, եւ կրկնելով իր գանգատը գլխա-
ցաւի մասին, քաշուեց դէպի իր ննջասենեակը :

Ֆարիօն մնաց արուեստանոցում : Նա ունէր մի

տարօրինակ շվաթ տպաւորութիւն որ իրան անհասկանալի էր մնում : Մուծծիոյի ներկայութիւնը իր տան մէջ, ուր ինքն իսկ ստիգողաբար հրաւիրել էր, այժմ իրան նեղացոցիչ էր թւում :

Եւ ոչ թէ նրա համար, որ նա նախանձում էր, ուեւէ մէկը կարո՞ղ էր նախանձ զգալ Վալերիայի համար - այլ նա իր նախկին ընկերը այլ եւս չէր ճանաչում : Ցոլոր այն տարօրինակ, անծանօթ բաները, որ Մուծծիոն բերել էր իր հետ հեռաւոր երկիրներից, եւ որոնք ըստ երեւոյթին, ներմուծուել էին նրա մարմնոյն եւ արեան մէջ - բոլոր այդ մողական բաները, երգերը, օտարոտի խմբեցները, համբ Մալայեցին, նոյն իսկ համեմաւոր բուրումները որ արտահոսում էին Մուծծիոյի հագուստներից, մաղերից, չնչից, - այդ բոլորը, Ֆարիօին ներշնչեցին կասկածոտութեան, նոյն իսկ թերեւս վեհերոտութեան մերձաւոր մի զգացողութիւն :

Եւ ինչո՞ւ համար այդ Մալայեցին, սեղանին սպասաւորած միջոցին այնպիսի անախորժ դիտաւորեալ նայուածքով աչքերը իր վրայ յառում էր : Իսկապէս, ուեւէ մէկը, կարող էր ենթադրել, որ նա հասկանում էր իտալերէն :

Մուծծիոն ասել էր նրա համար, որ կորցնելով իր լեզուն, այս Մալայեցին, մի մեծ զոհողութիւն էր առել, եւ ի վարձարութիւն, այժմ տիրապետում էր մի մեծ ոյժի :

«Ի՞նչ տեսակ ոյժի», եւ ի՞նչպէս նա կարող էր այդ ուժը ստացած լինել՝ իր լեզուի զնով» :

Այս բոլորը շատ տարօրինակ եւ անընթոնելի էին :

Ֆարիօն զնաց իր կնոջ սենեակը, նա հագուած պառկել էր մահճակալի վրայ բայց քնած չէր : Լսելով իր ոտնածայնը, նա ցնցուեց, ապա նորից այնպէս թւուց որ ուրախացաւ նրան տեսնելով՝ ինչպէս պարտէցում : Ֆարիօն նստեց մահճակալի մօտ, բռնեց Վալերիայի ձեռքը, եւ մի կարճ լուսթիւնից յետոյ, հարցրեց նրան : «Ի՞նչ էր այն արտաքոյ կարդի երազը, որ այնքան ահարեկել էր նրան, նախընթաց զիշերը : Եւ միթէ՞ ամէն կերպով նման էր այն երազին որ Մուծծիոն նկարագրել էր» : Վալերիան շառագոնեց ու հապճապով ասաց - «Օ, ո՛չ, ո՛չ, ես տեսայ ... մի տեսակ հրէչ, զազան, որ աշխատում էր ինձ պատառ պատառ անել» : - «Մի հրէ՞չ, մարդո՞ւ կերպարանքով», հարցրեց Ֆարիօն : - «Ոչ, մի զազան... մի զազան» : Վալերիան դարձաւ մէկ կողմ եւ թագցրեց իր այրուող երեսը բարձերի մէջ :

Ֆարիօն իր կնոջ ձեռքը մի քիչ աւելի երկար պահեց իր ձեռքի մէջ, յետոյ բարձրացրեց իր ըրթներին, ու մեկնեց : Երկու երիտասարդ ամուսինները այդ օրն անցըին ճնշուած սրտով : Մի ինչ որ մութ բան, երեւում էր որ կախուած էր նրանց գլխի վերեւ... բայց ինչ էր այդ, նրանք չէին կարողանում ասել : Նրանք ցանկանում էին լինել միասին, որպէս թէ մի վտանգ էր սպանում նրանց . բայց ինչ ասէին միմեանց, չէին իմանում :

Ֆարիօն ջանք արեց նկարի մասին խօսել, եւ կարդալ Արիօսոյից, որի քերթուածը դեռ նոր էր լոյս տեսել, եւ որ այժմ մէծ աղմուկ էր բարձրացնում ամբողջ իտալիայում, բայց ի զուր, ոչինչ չէր օգնում : Երեկո-

յին, ուշ ժամանակ, ճիշտ ընթրիքի պահուն Մուծծիօն
դարձաւ:

Է

Մուծծիօն երեւում էր հանդարտ եւ գուարթագին,
բայց նրանց շատ քիչ բան ասաց: Նա աւելի հակում
ցոյց տուեց հարցումներ անելու ֆարիօին, իրանց հա-
սարակաց ծանօթութեանց, գերմանական պատերազ-
մի, եւ Շարլ կայսեր մասին: Նա խօսեց իր սեփական
շանկութեան մասին, այցելել Հռոմ եւ տեսնել նոր Պա-
տին: Նորից Վալերիային առաջարկեց մի քիչ Շի-
րազի գինիից, եւ երբ նա մերժեց, իր մտքում նկատեց,
«Կարիք չկայ այժմ, այլդքան վստահ լինելու»: Դառ-
նալով ետ իր կնոջ հետ գէպի իրենց սենեակը, ֆարիօն
իսկոյն քննեց եւ զարթնելով մի ժամ յետոյ, համոզ-
ուած դդաց իրան թէ ոչ ոք չէր բաժանում իր անկո-
ղինը: Վալերիան իր կողքին չէր: Նա շտապով վեր կե-
ցաւ, եւ հէնց այդ վայրկեանում, տեսաւ իր կնոջը՝ իր
դիշերային տարագով, որ գալիս էր պարտէզից գէպի
իրանց սենեակը: Լուսինը պայծառօրէն փայլում էր,
թէեւ դրանից քիչ առաջ, մի թեթեւ անձրեւ տեղացել
էր: Փակուած աչքերով, մի խորհրդաւոր սարսափի
արտայայտութիւն իր անշարժ դէմքի վրայ, Վալերիան
մօտեցաւ անկողին, եւ ձեռքերը տարածելով շօշափեց
նրան, եւ ապա շտապով անբարբառ մտաւ անկողին:
Ֆարիօն դարձաւ գէպի նրան մի հարցումով, բայց նա
չպատասխանեց, նա երեւում էր թէ քնած էր: Դպչե-
լով նրան զգաց նրա հագուստներից ու մազերից անձ-

բեւի կաթիլները, եւ նրա մերկ ոտքերի գարշապարում
փոքրիկ աւազի հատիկները: Ապա, նա վեր ցատկելով
վազեց գէպի պարտէզը: կիսաբաց դրան միջից լուսնի
վառ պայծառութիւնը բոլոր առարկաները լոյսով պա-
րուըել էր: Ֆարիօն նայեց շուրջը, եւ նշմարեց որ ա-
ւազի վրայ գտնուում էին զրոշմներ երկու զոյտ ոտքե-
րի, մէկ զոյտը բոպիկ, եւ այս զրոշմները առաջնոր-
դում էին գէպի յամփիկների մի հովանավայր, տաղա-
ւարի եւ տան միջնեւ զտնուած մի անկիւնում: Նա մնաց
անշարժ վարանոտութեան մէջ, եւ յանկարծակի, նա
միանգամ եւս լսեց երգի հնչւնները, այն նուագի որ
նա լսել էր նախընթաց գիշերը: Ֆարիօն սարսուաց եւ
վազեց գէպի տաղաւարը... Մուծծիօն, կանգնած սեն-
եակի մէջտեղում, նուագում էր ջութակի վրայ:

Ֆարիօն նրա վրայ խոյացաւ. «Դու պարտէզումն
ես եղել, քո շորերը անձրեւից թաց են»:

«Ոչ... ես չեմ իմանում ... ես կարծում եմ... ես
դուքս ելած չեմ...» Մուծծիօն պատասխանեց մեղմօ-
րէն, ապշած երեւալով ֆարիօի մուտքից եւ նրա գըր-
գուուած վիճակից :

Ֆարիօն բոնեց նրա ձեռքը. «Եւ ինչու նորից նուա-
գում ես մեղեղին... Արդեօ ք նորից մի երազ ես տե-
սել»: Մուծծիօն մի ակնարկ նետեց ֆարիօին, միեւնոյն
ապշութեան նայուածքով եւ ոչինչ շասաց :

«Պատասխանիր ինձ»:

«Լուսինը կանգնած է բարձր, բոլորաձեւ վահանի
նման».

Օձի նման գետն է չողշողում...

Բարեկամը արթուն՝ թշնամին քնած.

Թուշունը բազէի ճանկերումն է . . . օդնութիւն».

Մրժնչեց Մուծծիօն, ինքն իրան մրմարով, որպէս
թէ զառանցանքի մէջ եղած լինէր:

Ֆարփօն երկու քայլ զէպի հետ քաշուեց, նայեց
Մուծծիօնն, կշապատեց մի բոպէ, եւ վերապանա-
լով տուն, գնաց իր ննջասենեակը:

Վալերիան, գլուխը ուսին վրայ վլած եւ ձեռնե-
րը անկինդան վար կախուած, խոր քնի մէջ էր:

Ֆարփօն չէր կարող իսկոյն վարթեցնել նրան . . .
բայց Վալերիան անմիջապէս տեսաւ նրան, ինքն ի-
րան նետեց նրա վզով ու ջղաձգօրէն համրուրեց նրան:
Նա գողում էր ամբողջ մարմնով: «Ի՞նչ է պատահել,
իմ անգինս, ի՞նչ կայ, շարունակում էր կրկնել ֆա-
րփօն, աշխատելով հանգստացնել նրան: Բայց նա տա-
կաւին անկինդան փոտել էր իր կրծքի վրայ: «Օ, ի՞նչ
սոսկալի երազներ ես տեսայ, փափսաց Վալերիան,
թագյնելով իր գէմքը նրանից: Ֆարփօն ուղում էր հար-
ցաքնել նրան . . . բայց նա գողուողում էր միայն: Գա-
տուհանի ապակիները աստատեան լոյսից շառագնում
էին, երբ վերջապէս բնկաւ քնի մէջ իր բազուկներում:

Յաջորդ օրը Մուծծիօն առաւօտ կանուխ անհետա-
ցաւ, այն ինչ Վալերիան տեղեկացուց իր ամուսնուն թէ
ինք նպատակ ունի գնալու մերձակայ մի վանք, ուր-
տեղ ապրում էր իր հոգեւոր հայրը, մի ծերունի խըս-
տաբարոյ վանական, որի վրայ նա անսահման վստա-
հութիւն ունէր: Ֆարփօն հարցափորձին նա պատաս-
խանեց թէ ինք ցանկանում է խոստովանութեամբ մը-
խիթարել եւ զօրացնել իր հոգին, որ ճնշուել էր վեր-
ջին մի քանի օրուայ արտակարգ տպաւրութիւնների
ներքոյ:

Մինչդեռ նա նայում էր Վալերիայի ընկճուած դէմ-
քին ու լսում նրա նուաղած ձայնը, Ֆարփօն հաւանու-
թիւն տուեց նրա ծրագրին: Արժանաւոր հայր Լորէն-
ցօն գուցէ տայ նրան թանկագին խորհուրդներ, եւ գու-
ցէ փարատէ նրա տարակոյսները . . .

Չորս սպասաւորների ուղեկցութեամբ, Վալերիան
ճանապարհուեց գէպի վանքը, այն ինչ Ֆարփօն մնաց
տանը, եւ թափառում էր պարտէղի մէջ մինչեւ իր կը-
նոջ վերագարձը, ջանալով ըմբռնել թէ ի՞նչ էր պա-
տահել նրան, ի՞նչու էր զոհ դարձած մի մշտական եր-
կիւղի եւ սրտմտութեան, եւ անորոշ կասկածների ցա-
ւին: Մի քանի անդամ գնաց զէպի տաղաւարը, բայց
Մուծծիօն չէր վերագարձել, իսկ Մալայեցին աչքը
յառած՝ նայում էր Ֆարփօն մի արձանի նման, ըս-
տրկօրէն գլուխը խոնարհեցնելով, իր պղնձագոյն դէմ-
քին վրայ մի ժպիտով որ, ինչպէս թւում էր Ֆարփօն,
լաւ քողարկուած էր:

Միեւնոյն ժամանակ, Վալերիան խոստովանանքին
մէջ ամէն ինչ ասել էր իր քահանային, ոչ այնքան ա-
մօթով որքան սարսափով: Քահանան լսեց նրան ուշա-
գրութեամբ, տուաւ նրան իր օրհնութիւնը, արձակեց
նրան իր ակամայ մեղքից, բայց ինքն իրան մտածեց՝
«Կախարդանք, սատանայի արուեստ . . . խնդիրը այս-
պէս չի կարելի թողնել . . .»: Եւ Վալերիայի հետ վե-
րագարձաւ նրա ամարանոցը, թերեւս այն նպատակով,
որ կատարելապէս խաղաղեցնէր ու ապահովացնէր
նրան: Ի տես քահանային, Ֆարփօն նետուեց մի տե-
սակ յուղմունքի մէջ, բայց փորձառու ծերունին կան-
խամտածել էր թէ ինչպէս պէտք էր վարուէր նրա հետ:

Երբոր նա թողուեց մենակ ֆարիօի հետ, ի հարկէ չի մատնեց խոստովանութեան դադանիքը, բայց խոր-Հուրդ տուեց նրան, որ եթէ կարելի է ազատուեն հիւ-րից, որ իրանք հրաւիրել են իրանց տանը, նրա երգե-րը, եւ նրա ամբողջ ընթացքը վրդովում են Վալերիա-յի երեւակայութիւնը: Բացի դրանից, ծերունիի կար-ծիքով, Մուծծիօն, որքան յիշում էր, նախկին օրերից սկսած, հաւատքի մէջ այնքան հաստատ չէ եղել, եւ իր կեանքի այնքան երկար մէկ մասը սպառած լինելով քրիստոնէութեան ճշմարտութիւններից չլուսաւորուած երկրների մէջ, նա գուցէ իր հետ բերած լինի վարա-կումը թիւր վարդապետութիւնների, նա նոյն իսկ գուցէ ընտանի գարձած լինի գաղանի մոզական ար-ուեստների: Ուստի եւ թէպէտ բազմամեայ բարեկամու-թիւնը ունէր իրօք իր իրաւունքները, սակայն մի իմաս-տուն խոհեմութիւն մատնացոյց էր անում բաժանման անհրաժեշտութիւնը:

Ֆարիօն կատարելապէս համաձայնուեց կղերա-կանին հետ: Վալերիան նոյն իսկ ուրախացաւ, երբ իր ամուսինը տեղեկացրեց նրան քահանայի տուած խոր-Հուրդը. եւ երիտասարդ ամոլի սրտագին բարեմաղ-թութիւններով ճանապարհ դրուելով, վանատան եւ աղքատների համար ընծաներով բեռնաւորուած, Հայր Լորէնցօն վերագրածաւ տուն: Ֆարիօն նպատակ ու-նէր ընթրիքից անմիջապէս յետոյ Մուծծիօն բացա-տրութիւն աւալ, բայց նրա տարօրինակ հիւրը չվերա-գրածաւ ընթրիքին: Ապա, ֆարիօն որոշեց յետաձգել իր խօսակցութիւնը Մուծծիօի հետ մինչեւ յաջորդ օրը, եւ այր ու կին քաշուեցան իրենց սենեակը հանդստանա-լու:

Պ.

Վալերիան խոկոյն քնեց, բայց, ֆարիօն չէր կա-րողանում քնել: Գիշերուայ լուռութեան մէջ, ամէն բան որ տեսել էր, ամէն բան որ զգացել էր, ներկայանում էին աւելի կենդանի կերպով: Նա ինքն իրան տակաւին աւելի յամաօրէն տալիս էր հարցեր, որոնց ինչպէս առաջ, պատասխան չէր գտնում: «Մի՞թէ Մուծծիօն խակապէս մի կախարդ էր դարձել, եւ մի՞թէ նա արդէն թունաւորած չէր Վալերիային: Նա հիւանդ էր... բայց ի՞նչ էր նրա հիւանդութիւնը»: Երբ պառկեցաւ, գլու-խը ձեռքերում, բանելով իր տենդու շունչը ու վշտա-գին խորհրդածութեանց անձնատուր, լուսինը՝ նորից բարձրացաւ անամպ երկնակամարի վրայ եւ, նրա ճա-ռագայթների հետ միասին, կիսաթափանցիկ պատու-հանի ապակիների միջից, սկսաւ, տաղաւարի ուղղու-թիւնից կամ արգեօք այդ ֆարիօի երեւակայութիւնն էր - գալ մի փափսուք, ինչպէս մի թեթեւ անուշահոտ հոսանք. ապա մի թափանձագին տարփատենչ մրմունջ լսուեց... եւ այդ վայրկեանում ֆարիօն նկատեց, որ Վալերիան սկսում էր նուաղկոտօրէն երերուիլ: Յընց-ուից, նայեց. Վալերիան վեր կացաւ, նախ կամացուկ սահեցուց մէկ ոտքը, ապա միւսը դուրս հանեց անկող-նուց, եւ լուսնից հրապուրուած մէկի նման, իր ան-կենդան աչքերը անշարժ սեւեռած առջեւը, ձեռները տարածելով, սկսեց շարժուել գէպի պարտէզը: Ֆա-րիօն վայրկենապէս վաղեց միւս սենեակի դռնից դուրս եւ արագապէս դառնալով տան չուրջը, նիգեց գուռը, որ առաջնորդում էր գէպի պարտէզը...: Հազիւ թէ

ձեռքը նիդին էր գրած երբ զգաց թէ մէկը աշխատում էր բաց անել գուռը ներսի կողմից, հրելով նորից եւ նորից... եւ ապա, այնտեղից լուսեց մի ողորմուկ տարփակէղ հեծեծանք...

«Բայց Մուծծիօն քաղաքից չի վերադարձել» վայլատակուեց ֆարփօի գլխում, եւ նա խուժեց դէպի տառաւրը...:

Ի՞նչ տեսաւ:

Գալիս էր դէպի նա, լուսնի ճառագայթների ներքեւ ակնախտիղ կերպով փայլող արահետից, Մուծծիօն. նա շարժում էր մի լուսնոտի նման, ձեռները իր առջեւ կարկառած, աչքերը բաց, այլ առանց տեսնելու... ֆարփօն փակեց դէպի նա, բայց նա ուշագրութիւն չգարձնելով շարժուեց առաջ, քայլում էր միակերպ, չգայլ առ քայլ, եւ նրա խստարարոյ դէմքը լուսնի լուսով ժապում էր Մալայեցուն նման: Ֆարփօն կարող էր կանչել նրան իր անունով... բայց այդ փայրիկանում, իր ետեւից, տան միջից, լոեց մի պատուհանի ճռնչուց...:

Նայեց իր շուրջը...

Այսուհետեւ պատուհանը բացուել էր վերից մինչեւ վարը, եւ վալերիան, մէկ ոտքը դնելով յեցուկի վրայ, կանգնեց պատուհանի մէջ... նրա ձեռնեցուկի վրայ, կանգնեց պատուհանի մէջ... նա աւելի քան ճիշտ էին Մուծծիօնն... թում էր թէ րը կարծես որոնում էին Մուծծիօնն... թում էր թէ նա աւելի քան ճիշտ էր թափում գնալ դէպի նա...:

Անասելի մի զայրոյթ լցրեց ֆարփօի կուրծքը մի յանկարծահաս ներխուժով: «Եղամիա՛լ կախարդ, աղաղակեց կատաղութեամբ, եւ բոնելով մէկ ձեռքով Մուծծիօի կոկորդից, միւս ձեռքով շօշափեց իր գո-

տիում դաշոյնը, եւ միւեց չեղը նրա կողքին մէջ, մինչեւ դաստակալը:

Մուծծիօն արձակեց մի բարձրաձայն ճիչ, եւ գընելով ձեռքը վէրքին վրայ, զողդողալով վազեց դէպի տաղաւարը: Բայց միեւնոյն վայրկեանում, երբ ֆարփօն դաշունահարեց նրան, Վալերիան բարձրաձայն ճչաց, եւ ընկաւ գետինը մանդաղից կտուած խոտինը ման:

Փարփօն վազեց դէպի նա, բարձրացնելով նրան, տարաւ անկողինը ու սկսեց խօսել նրան...

Նա անշարժ պառկած մնաց մի երկար ժամանակ, բայց վերջապէս բաց արեց աշքերը, մի խոր, բեկուած, երանաւէտ հառաջանք արձակեց, նման մէկին, որ մազապուրծ ազատուած է անմիջական մահից, տեսաւ իր ամուսնուն, եւ փաթաթելով բազուկները նրա վզով՝ սողաց դէպի նրա մօտ, «Դո՛ւն, դո՛ւն ես» թոթովեց: Աստիճանաբար ձեռները թուլացան, նրա զլուխը թեքուց դէպի ետ, եւ մի երանաւէտ ժպիտով մըմնջաց՝ «Փա՛ռք Աստուծոյ, բոլորը վերջացաւ... Բայց ո՛րքան յոդնած եմ զգում ինձ»: Եւ ընկաւ մի խոր բայց ոչ ծանր քունի մէջ:

Ժ.

Փարփօն նստեց նրա անկողին մօտ եւ բնաւ աշքերը չվերցնելով նրա զունաս, ընկճուած, բայց արդէն խաղաղած դէմքից, սկսեց անդրադառնալ այն բանի վրայ, ինչ որ պատահել էր... եւ նոյնպէս, թէ ի՞նչպէս այժմ պէտք է շարժուեր, ի՞նչ քայլ պէտք է առ-

ներ: Եթէ ինք սպանել էր Մուծծիօխն - եւ յիշելով թէ
որքան խորը մտել էր դաշոյնը նրա կողքին, այդ մա-
սին կասկած չունէր, - չէր կարելի այդ թաղցնել: Նա
պէտք էր այդ մասին տեղեկացնէր արքիղուքսին, դա-
տաւորներին . . . բայց ինչպէ՞ս բացատրել, ի՞նչպէս
նկարագրել մի այդպիսի անըմբռնելի արարք: Նա, ֆու-
րիօն, իր սեփական տան մէջ սպաննել է իր մերձաւոր
ազգականին, իր ամենասիրելի բարեկամին: Նրանք
պիտի հարցնեն՝ «Ինչո՞ւ համար, ի՞նչ հիման վրայ . . .»:
Բայց եթէ Մուծծիօն մեռա՞ծ չէ: Ֆարիօն չի կարող
հանդուրժել մնալ անորոշութեան մէջ: Եւ ապահովե-
լով ինքն իրան, թէ Վալերիան քնած է, նա զգուշու-
թեամբ վեր կացաւ իր աթոռից, եւ տանից դուրս գա-
լով քայլերը ուղղեց գէպի տաղաւարը: Ամէն բան լուռ
էր այնտեղ, միայն մէկ պատուհանում մի լոյս էր ե-
րեւում:

Ճնշուած սրտով բաց արեց դուռը (այնտեղ կային
տակաւին արիւնթաթախ մատների հետքեր, եւ արիւ-
նի սեւ կաթիւներ կային աւազու ճանապարհի վրայ)՝
եւ անցաւ առաջին մութ սենեակի միջից . . . ու կանդնեց
անշարժ դրան շէմքում, ընկճուած՝ ապշութիւնից:
Սենեակի մէջտեղում, մի պարսկական գորդի վրայ,
մի ոսկեհուռ ծաղկենկար բարձ իր գլխի ներքոյ, Մուծ-
ծիօն, անդամները ուղիղ դուրս երկնցուցած, պառկել
էր, ծածկուած մի լայնատարած եւ սեւանկար կարմիր
շալով: Նրա գէմքը, մոմի նման դեղնագոյն, փակուած
աչքերով եւ կապուտցած կոպերով, զարձած էր գէպի
առաստաղը, ոչ մի շունչ չէր զգացւում նրա մէջ. թը-
ւում էր մի գիտակ: Նրա ոտքերի կողմը՝ ծնրագիր նըս-

տել էր Մալայեցին, որ նոյնպէս ծածկուել էր մի կար-
միր շալով: Նա իր ձախ ձեռքում բոնել էր մի ինչ որ
անծանօթ տունկի ճիւղ, վայրի ձարխուափ նման, եւ
թեթեւ ծոսւելով դէպի առաջ, ակնապիշ, անքթիթ
նայում էր իր տիրոջը: Մի փոքրիկ ջահ ամրացուել էր
տախտակամածի վրայ, որ վառում էր մի գեղնագոյն
բոցով, եւ միակ լոյսն էր սենեակում: Բոցը չէր պըլ-
պլում ոչ էլ մխում: Մալայեցին չչփոթուեց ֆարիօն
ներս մտնելուցը: Նա պարզապէս աշքերը նրան դարձ-
րեց, եւ նորից հակեց նրանց Մուծծիօի վրայ: Փամա-
նակ առ ժամանակ նա բարձրացնում եւ ցածացնում էր
ճիւղը, ու ճօնում նրան օդում, եւ իր համք շրթները
կամաց կամաց անջատում եւ շարժում էին, որպէս
թէ արտասանէին անձայն խօսքեր: Տախտակամածի
վրայ, Մալայեցու եւ Մուծծիօի միջեւ, փոռել էր դա-
շոյնը, որով ֆարիօն հարուածել էր իր բարեկամին: Մալայեցին ճիւղով մէկ հարուած զրկեց արիւնլուայ
դաշոյնին: Մի բոսէ անցաւ . . . մի ուրիշ եւս: Ֆարիօն
մօտեցաւ Մալայեցուն, եւ ծոելով գէպի նա, հարցրեց
նրան ցած ձայնով, «Մեռա՞ծ» է: Մալայեցին խոնար-
հեց գլուխը վերից վար, եւ արձակելով աջ ձեռքը շա-
լից, տիրաբար մատնանշեց դուռը: Ֆարիօն ուզում էր
կրկնել իր հարցումը, բայց հրամայող ձեռքի կեցուած-
քը կրկնուել էր, եւ ֆարիօն դնաց դուրս սրտմած,
զարմացած, բայց հնազանդ:

Նա զաւաւ Վալերիային քնած, ինչպէս առաջ, եւ
նոյն իսկ մի աւելի հանդարտ գէմքի արտայայտութիւ-
նով: Նա չհանուեց. բայց նստեց պատուհանի մօտ, գը-
լուիր ձեռքերումը, եւ միանդամ եւս խորասուզուեց

խորհուրդների մէջ։ Մագող արեւը գտաւ նրան տակաւին միեւնոյն տեղում։ Վալերիան չէր զարթնել։

ԺԱ.

Ֆարիօն մտագրուեց սպասել մինչեւ զարթնելը եւ ապա պատրաստուել ճանապարհուելու գէպի ֆէրրարա, երբ մէկը թեթեւ կերպով զարկեց գուռը։ Ֆարիօն դուրս ելաւ եւ տեսաւ իր ծերունի մատակարար Անտօնիօին։ «Մինեօր» - սկսեց ծերունին - Մալայեցին ճիշդ հիմա տեղեկացրեց ինձ, որ սինեօր Մուծծիօն ծանրապէս հիւանդացել է, եւ ցանկանում է, որ իր գոյքերը փոխադրուեն քաղաք, եւ միաժամանակ նա խնդրում է ձեզանից թոյլ տալ նրան ունենալ ծառաներ որպէս զի օդնեն տեղաւորելու իրեղինները։ Խնդրում է նաեւ որ ճաշի ժամանակ համիք ուղարկել կապոցակիր ձիեր եւ թամրուած ձիեր, եւ մի քանի ուղեկիցներ՝ ճանապարհորդութեան համար։ Թոյլ տալու էք»։

«Մալայեցին տեղեկացրեց ձեզ այդ», հարցրեց Ֆարիօն։ «ի՞նչ կերպով. նա համր է»։ «Ահաւասիկ, սինեօր, այն թուզթը, որի վրայ նա զրեց, բոլորը մեր լեզուով, եւ շատ ճշգութեամբ»։ «Եւ Մուծծիօն ասում են հիւանդ է»։ «Այս, նա խիստ ծանր հիւանդ է, եւ ոչ ոք չի կարող տեսնել»։ «Երանք բժշկի դիմել են»։ «Ո՛չ, Մալայեցին թոյլ չի տուել»։ «Եւ այս Մալայեցին զրեց»։ «Այս, նա ինչը զրեց»։ Ֆարիօն մի քանի բոպէ չխօսեց։ «Ապա, այդ գէպքում, կարգադրի բոլորը, ասաց նա վերջապէս։ Անտօնիօն հեռացաւ։

Ֆարիօն շփոթուած մի ակնարկ նետեց իր ծառա-

յի ետեւըց։ «Ուրեմն, նա չէ մեռա՞ծ», մտածեց մւ չէր իմանում հրճուէ՞ր, թէ արտմէր։ «Հիւանդ» մայց մի քանի բոպէ առաջ նա մի դիակ էր, որին իր աչքովը տեսել էր։ Ֆարիօն վերադարձաւ Վալերիային։ Նա զարթնելով բարձրացրեց գլուխը. ամուսինն ու կինը փոխանակեցին մի երկար նայուածք, նշանակութիւնով լեցուն։

«Նա գնացե՞լ է», ասաց Վալերիան յանկարծակի։ Ֆարիօն գողուղաց. «Ի՞նչալէս թէ գնացել է, «ի՞նչ ուղում ես ասել»……

«Նա միկնե՞լ է այստեղից……» շարունակեց Վալերիան։

Մի բեռ ընկաւ Ֆարիօն սրտից։ «Ո՛չ, տակաւին այսօր գնալու է»։

«Եւ ես նորից երբեք, երբեք պիտի չտեսնե՞մ նըրան»։

«Ո՛չ, երբե՞ք»։

«Եւ այս երազները նորից չե՞ն վերադառնալու»։

«Ո՛չ»։ Վալերիան նորից արձակեց հանգստացման մի խոր հառաջանք, եւ, մի երանաւէտ ժպիտ մի անդամ եւս երեւեցաւ նրա շրթների վրայ։

«Եւ մենք երբեք խօսելու չենք նրա մասին, երբե՞ք. լսո՞ւմ ես, սկրելի՛ս, ... եւ ես թողնելու չեմ իմ սենեակը մինչեւ որ նա գնացած լինի։ Եւ հիմա, ուղարկիր ինձ իմ նաժիշտները... բայց սպասիր,- մէկ կողմ տար այդ բանը - նա մատնացոյց արաւ Մուծծիօն կողմից արուած մարգարտեայ մանեակը, որ կեցած էր անկողնին կից, մի փոքրիկ սեղանի վրայ - եւ նետիր նրան խկոյն ամենախոր ջրհորին մէջ։ Գրկիր ինձ, ես

քո Վալերիան եմ, եւ է՛լ մի գար ներս, ինձ մօտ, մինչեւ... նրա գնալը»:

Ֆարիօն առաւ մանեակը - նրա մարդարիտները, որ այնքան սիրել էր, այժմ մղուցած էին երեւում - եւ արաւ ինչպէս իր կինը տնօրինեց: Ապա, նա վար իջաւ, պարտէզի շուրջը թափառելու. նայեց հեռուից դէպի տաղաւարը, որի շուրջը մեկնումի շարժման պատրաստութիւններ էին սկսուել: Սպասաւորները դուրս էին բերում արկղներ, բենաւորում էին ձիերը... բայց Մալայեցին նրանց մէջ չէր: Մի անդիմադրելի մղում ֆարիօն ստիպեց մի անգամ եւս նայելու ինչ որ կատարւում էր տաղաւարում: Նա վերլիշեց, որ ետեւում գաղտնի մի դուռ կար, որից կարող էր հասնել ներսի սենեակը, որտեղ Մուծծիօն առաւտուն պառկել էր: Նա գաղտնի կերպով պտրաց դրան շուրջը, եւ գտաւ նրան չկղպուած, եւ, անջատելով մի ծանր վարագոյրի փակուած ծալքերը, նրանց միջից մի վարանոտ ակնարկ պտրացուց սենեակի վրայ:

ԺԲ.

Մուծծիօն այժմ պառկած չէր գորդին վրայ: Հաղնուած, իբր թէ ճամբորգելու էր, նա նստել էր մի բաղկաթուի վրայ, բայց մի գիտիկի էր նմանում, ճիշդինչպէս ֆարիօն առաջին այցելութեան ժամանակ: Նրա ընդարձացած գլուխը ընկել էր աթոռի ետեւը, եւ նրա դէպ առաջ երկարած ձեռները դեղին, անկենդան, կարծրացած, կախուել էին իր ծունկերի վրայ: Նրա կուրծքը չէր եւեւէջում: Աթոռին մօտ, տախտակամածին վըրայ, որտեղ չորացած խոտածաղիկների տերեւները

փռուել էին, կանգնած էին մի քանի տափակ թասեր մի սեւ հեղուկով լցուած, որը արտաշնչում էր մի զօրաւոր հոտ գրեթէ հեղձուցիչ, մշկախղի հոտ: Իւրաքանչիւր թասի շուրջը պլլուել էր պղնձագոյն մի փոքրիկ օձ, ոսկի աչքերով, որ ժամանակ առ ժամանակ շողշողում էին, այն ինչ ուղղակի Մուծծիօնն դիմացը, երկու քայլ նրանից հեռու, երեւում էր Մալայեցու երկար կերպարանքը, փաթաթուած՝ մի վերարկուի մէջ բաղմագոյն ծաղկներով դիպակից, որը կապուած էր մէջքի շուրջը մի վագրի պոչով. մի սրածայր խոյրի ձեւ ունեցող գլխարկ դրած էր գլխին: Բայց նա անշարժ չէր: Մի վայրկեան նա ակնածանքով խոնարհում էր վար, եւ թւում էր թէ աղօթում էր, իսկ միւս վայրկեանում, ինքն իրան վեր քաշում էր իր բովանդակ բարձրութիւնով, նոյն իսկ կանգնելով ոտի մատների ծայրերի վրայ. եւ ապա, մի ներդաշնակ շարժուածքով լայն տարածում էր բազուկները, ու յարատեռութեամբ շարժում էր դէպի Մուծծիօն: Թւում էր, որ սպառնում եւ կամ հրամայում էր նրան, յօնքերը պաստելով, ոտքը գետինը զարնելով: Այս բոլոր գործողութիւնների համար, երեւում էր որ նա մեծ ճիգ էր թափում, նոյն իսկ ի վնաս իր անձին. նա չնչում էր ծանր կերպով եւ քրտինքը հոսում էր իր ճակատից:

Յանկարծ նստեց գետնին վրայ, եւ քաշելով մի լեցուն շունչ, յօնքերը կնճռոտած՝ անհուն ջանքով իր ամուր սեղմած ձեռները երկարում էր դէպի նա, որպէս թէ նրանցում մի սանձ բռնած լինէր: Եւ ֆարիօն մի աննկարագրելի սարսափով տեսաւ, որ Մուծծիօն գլուխը կամաց կամաց բարձրանալով աթոռի ետեւից

շարժուեց դէպի առաջ՝ հետեւելով Մալայեցու ձեռներին։ Մալայեցին թոյլ առուեց, որ նա ընկնէր վար եւ Մուծծիօի գլուխը նորից ծանրապէս ընկաւ դէպի յետ։ Մալայեցին կրկնեց իր շարժումները, եւ գլուխը հլու կերպով նրան հետեւելով կրկնեց նոյն շարժումները։ Թասերում գտնուած սեւ հեղուկը սկսեց արձագանգել մի նուազ զանգականման հնչիւն, եւ պղնձագոյն օճերը ազատորէն պլատում էին նրանցից իւրաքանչչւրին չուրջը։ Ապա, Մալայեցին դէպի առաջ մի քայլ առաւ, եւ բարձրացնելով արտեւանունքը անհունապէս լայն բաց արեց աչքերը եւ խոնարհեցրեց գլուխը դէպի Մուծծիօն։ Եւ մեռած մարդու կոպերը դողդղացին, տարտամ կերպով բաժանուեցին, եւ նրանց տակից կարելի էր տեսնել աչքի գունդերը, ազօտ որպէս կապար։ Մալայեցու դէմքը պայծառ էր յաղթական հպարտութիւնով եւ հրճուանքով, մի հրճուանք՝ որ գրեթէ չարաբարոյ էր։ Նա լայն կերպով բաց արեց բերանը եւ կրծքի խորքից մի երկարաձիգ ոռնոց արձակեց . . .։ Մուծծիօի շրթներն էլ անջատուեցին, եւ մի նուազ հեծին դողում էր նրանց վրայ, ի պատասխան այդ անմարդկային ձայնին . . .։ Բայց այս միջոցին ֆարիօն այլեւս չէր կարողանում տոկալ, եւ երեւակայում էր, որ ինք ներկայ էր մի ինչ որ դիւային թովզութեան։ Նա եւս մէ ճիչ արձակեց եւ խուժելով դուրս, վագեց դէպի տուն այնքան արագ որքան որ կարող էր, վազելու ատեն երեսը խաչակնքելով եւ աղօթքներ կըրկնելով։

ԺԳ.

Երեք ժամից յետոյ, Անտօնիօն եկաւ նրա մօտ, եւ յայտնեց նրան, թէ ամէն բան պատրաստ է, եւ թէ բոլոր իրերը ծրարուած լինելով՝ սինհօր Մուծծիօն պատրաստում է մեկնելու։ Առանց մի բառով պատասխանելու իր ծառային, Ֆարիօն գնաց դուրս պատշգամբի վրայ, ուրտեղից կարելի էր տեսնել ամարանոցը։ Մի քայլ կապոցակեր ձիեր խմբուեցին նրա շուրջը, մի հուժկու մարտաձի, որ թամբուել էր երկու հեծնողների համար, առաջնորդում էր դէպի սանդուխի աստիքանները, ուր գլասաբաց կանգնել էին սպասաւորները՝ զինուած առաջնորդների հետ։ Ամարանոցի դուռը բացուեց, եւ օգնութեամբ Մալայեցու, որը մի անգամ եւս հագել էր իր սովորական տարազը, Մուծծիօն երեւց։ Նրա դէմքը մեռելի նման էր, եւ ձեռները կախուել էին մեռած մարդու ձեռների նման, բայց նա քայլում էր . . . այսո՛, դրականապէս քայլում էր, եւ ուղղաբերձ նստելով ձիու վրայ, նա չօշափելով դուռ սանձը։ Մալայեցին զնելով ոտները ասպանդակին՝ ոստնեց վեր, նրա ետեւը, թամբին վրայ եւ բազուկներով դրկեց նրան, որից յետոյ ամբողջ խումբը ճամբայ եւ լաւ։

Ճիերը շարժուեցին, եւ երբ մի շրջան արին տան առջեւը, Ֆարիօն կարծեց որ Մուծծիօի թուխ դէմքում փայլում էին երկու բիծեր . . . կարո՞ղ էր լինել, որ նա աչքերը գարձրած լինէր իր վրայ։ Մալայեցին միայն խոնարհուեց դէպի նա։ . . . Հեղնականօրէն, ինչպէս միշտ։

Ժ Գ.

շարժուեց դէպի առաջ՝ հետեւելով Մալայեցու ձեռներին։ Մալայեցին թոյլ առուեց, որ նա ընկնէր վար եւ Մուծծիօի գլուխը նորից ծանրապէս ընկաւ դէպի յետ։ Մալայեցին կրկնեց իր շարժումները, եւ գլուխը հլու կերպով նրան հետեւելով կրկնեց նոյն շարժումները։ Թասերում գտնուած սեւ հեղուկը սկսեց արձադանդել մի նուազ զանգականման հնչիւն, եւ պղնձադոյն օճերը ազատորէն պլւում էին նրանցից իւրաքանչիւրին չուրջը։ Ապա, Մալայեցին դէպի առաջ մի քայլ առաւ, եւ բարձրացնելով արտեւանունքը անհունապէս՝ լայն բաց արեց աչքերը եւ խոնարհեցրեց գլուխը դէպի Մուծծիօն։ Եւ մեռած մարդու կոպերը դողդղացին, տարտամ կերպով բաժանուեցին, եւ նրանց տակից կարելի էր տեսնել աչքի գունդերը, աղօտ որպէս կապար։ Մալայեցու դէմքը պայծառ էր յաղթական հպարտութիւնով եւ հրճուանքով, մի հրճուանք՝ որ գրեթէ չարբարոյ էր. նա լայն կերպով բաց արեց բերանը եւ կրծքի խորքից մի երկարածիկ ոռնոց արձակեց . . .։ Մուծծիօի շրթներն էլ անջատուեցին, եւ մի նուազ հեծին դողում էր նրանց վրայ, ի պատասխան այդ անմարդկային ձայնին . . .։ Բայց այս միջոցին ֆարիօն այլեւս չէր կարողանում տոկալ, եւ երեւակայում էր, որ ինք ներկայ էր մի ինչ որ գիւրային թովչութեան։ Նա եւս մի ճիչ արձակեց եւ խուժելով գուրս, վազեց դէպի տուն այնքան արագ որքան որ կարող էր, վազելու ատեն երեսը խաչակնքելով եւ աղօթքներ կըրկնելով։

Երեք ժամից յետոյ, Անտօնիօն եկաւ նրա մօտ, եւ յայտնեց նրան, թէ ամէն բան պատրաստ է, եւ թէ բուլոր իրերը ծրարուած լինելով՝ սինեօր Մուծծիօն պատրաստում է մեկնելու։ Առանց մի բառով պատասխանելու իր ծառային, Ֆարիօն գնաց գուրս պատշգամբի վրայ, ուրախեղից կարելի էր տեսնել ամարանոցը։ Մի քանի կապոցակիր ձիեր խմբուեցին նրա շուրջը, մի հուժկու մարտածի, որ թամբուել էր երկու հեծնողների համար, առաջնորդում էր դէպի սանդուխի աստիճանները, ուր զլխաբաց կանգնել էին սպասաւորները՝ զինուած առաջնորդների հետ։ Ամարանոցի դուռը բացուեց, եւ օգնութեամբ Մալայեցու, որը մի անդամ եւս հագել էր իր սովորական տարազը, Մուծծիօն երեւց։ Նրա գէմքը մեռելի նման էր, եւ ձեռները կախուել էին մեռած մարդու ձեռների նման, բայց նա քայլում էր . . . այսուհետեւ գրականապէս քայլում էր, եւ ուղղաբերձ նստելով ձիու վրայ, նա շօշափելով գտաւ սանձը։ Մալայեցին գնելով ոտները ասպանդակին՝ ոստնեց վեր, նրա ետեւը, թամբին վրայ եւ բազուկներովը գրկեց նրան, որից յետոյ ամբողջ խումբը ճամբայ եւ լաւ։

Ձիերը շարժուեցին, եւ երբ մի շրջան արին տան առջեւը, ֆարիօն կարծեց որ Մուծծիօի թուխ դէմքում փայլում էին երկու բիծեր . . . Կարո՞ղ էր լինել, որ նա աչքերը դարձրած լինէր իր վրայ։ Մալայեցին միայն խոնարհուեց դէպի նա։ . . . Հեղնականօրէն, ինչպէս միշտ։

Վալերիան այս բոլորը տեսա՞ւ արդեօք: Նրա պատուհանի փեղկերը փակուած էին . . . բայց կարող էր լինել, որ նա կանգնած լինէր նրանց ետևում:

Ճաշի ժամանակ Վալերիան եկաւ ճաշասենեակը, եւ չափազանց հանդարտ եւ սիրալիր էր, սակայն եւ այնպէս նա դեռեւ գանդատում էր յոդնածութիւնից: Բայց այժմ նրանում զրեթէ յուզում չկար, նրա նախկին շարունակական շփոթութիւնն ու դադտնի սարսափը չկար: Եւ երբ Մուծծիօի մեկնելուց մէկ օր յետոյ Ֆարիօն նստեց նորից աշխատելու նրա նկարի վրայ, գտաւ նրա դէմքում մաքուր եւ անմեղ արտայայտութիւնը, որի վայրկենական խաւարումը այնքան վրդովել էր իրան . . . եւ նրա վրձինը հաւատարմօրէն շարժում էր թեթեւ կտավին վրայ:

Այս ու կին վերսկսեցին իրանց հին կեանքը:

Մուծծիօն անհետացաւ, որպէս թէ երբեք զոյութիւն ունեցած լինէր: Ֆարիօն եւ Վալերիան համաձայնուել էին, որպէս երեւում էր, չարտասանել ոչ մի վանկ նրա մասին, ոչ մի բան չիմանալ նրա հետագայ օրերից. նրա ճակատագիրը, սակայն, մնաց խորհրդաւոր բոլորի համար:

Մուծծիօն իսկապէս անհետացաւ որպէս թէ նա խորասուզուած լինէր հողին տակ: Ֆարիօ, մէկ օր մտածեց, որ իր պարտականութիւնն էր ճշգապէս ասելու Վալերիային թէ ի՞նչ պատահեց այն չարազուշակ գիշերը . . . բայց Վալերիան հաւանօրէն գուշակեց նրա նպատակը, եւ բոնեց շունչը, կէս փակելով աչքերը, որպէս թէ սպասելիս լինէր մի հարուածի:

Եւ Ֆարիօն նրան հասկացաւ, այդ հարուածը

չհասցրեց նրան: Մէկ գեղեցիկ աշնանային օր, ֆաբիօն իր Զեչլլիայի նկարի վերջին հպումներն էր կատարում, Վալերիան նստել էր գաշնամուրի մօտ, նրա մատները ըստ բաղդի գեղեցիցան ստեղնաշարի վրայ . . . Յանկարծ, առանց իր գիտակցութեան ձեռների տակից դուրս եկաւ առաջին ձայնանիշը յաղթական սիրոյ երգին, որը Մուծծիօն մի անգամ նուազել էր, եւ հէնց այդ վայրկեանում, առաջին անգամ իր ամուսնութիւնից ի վեր, նա ինքն իրան մէջ զգաց արովումը մի նոր բարախող կեանքի . . .

Վալերիան ցնցուեց, գաղարեց . . . Այդ ի՞նչ էր նշանակում . . . կարո՞ղ էր լինել որ . . .

Այս բառերի վրայ ձեռագիրը վերջանում էր:

Արձակ Բանաստեղծութիւններ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻ ԱԽԱՆԴԱՎՀՊ

ՎԵՐՁԻՆ ՀԱՆԴԻՌՈՒՄԸ

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

ԻՆՉ ԳԵՂԵՑԻԿ ԻՆՉ ԹԱՐՄ ԷԻՆ ՎԱՐԴԵՐԸ

(Արտապուած «Նոր Երկիր»էն)

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻ ԱԻԱՆԴԱՎԵՊ

Բաղդադում ո՞վ չի ճանաչում ձէֆֆէրին, Տիեզերքի Լոյսին :

Մի օր, շատ տարիներ առաջ, նա տակաւին երիտասարդ էր, ձէֆֆէր պտտում էր Բաղդադի արուարձաններում : Յանկարծ նրա ականջին հասաւ մի իեղդուկ ձայն, մէկը յուսահատօրէն աղաղակում էր ... օդնութիւն :

Նա վազեց դէպի ճիչը, եւ տեսաւ որ մի տկար ծերունի մարդ գամուած էր քաղաքի պարիսպներին՝ երկու աւազակների կողմից՝ որոնք կողոպտում էին նրան : Ձէֆֆէր քաշեց իր թուրը եւ յարձակուեց անօրէնների վրայ, մէկին սպաննեց, միւսին փախցուց : Ծերունի մարդը, այսպէս ազատուելով, ընկաւ իր ազատարարի ոտքին եւ համբուրելով նրա հազուստի ժապաւէնը, բացագանչեց «Դիւցազն երիտասարդ, քո մեծահոգիութիւնը անվարձատրելի չէ մնալու : Երեւոյթով ես մի խեղճ մուրացկան եմ, բայց միայն երեւոյթով : Ես մի հասարակ մարդ չեմ : Ես քեզ սպասելու եմ, շատրուանի մօտ, եւ դու պիտի համոզուիս իմ խօսքերի ճըշմարտութեանը» :

Ճէֆֆէր մտածեց : «Երեւոյթով այս մարդը անշուշտ մի մուրացկան է, բայց ամեն տեսակ բաներ պատահում են : Ինչո՞ւ չի փորձել» :

— «Շատ լաւ, բարի հայր, ես պիտի գամ», պատասխանեց Ճէֆֆէր :

Ծերունին նայեց նրա դէմքին եւ մեկնեցաւ : Հետեւ եալ առաւօտը, արեգակը հաղիւ թէ բարձրացել էր, Ճէֆֆէր գնաց շուկան : Ծերունին արդէն սպասում էր նրան, իր արժուկը յենած շատրուանի կոնքին : Նա լըութեամբ առաւ Ճէֆֆէրի ձեռքը եւ առաջնորդեց նըրան մի փոքրիկ պարտէզ՝ շրջափակուած բարձր պարսպներով :

Ճիշդ պարտէզին մէջտեղը, կանանչ մարգագետնի վրայ աճել էր տարօրինակ տեսքով մի ծառ, որ նմանուում էր նոճիի, միայն թէ նրա տերեւները կապոյտ գոյնով էին : Երեք միրգեր - երեք խնձորներ - կախուել էին դէպի վեր բարձրացած ճիւղի վրայ . մէկը միջակ մէծութիւն ունէր, երկարածեւ, եւ կաթի նման սպիտակ, երկրորդը՝ խոշոր, զնդաճեւ, փայլուն, կարմիր, երրորդը՝ փոքր, խորշոմած, գեղնագոյն :

Ամբողջ ծառը թոյլ կերպով շառաչում էր, թէեւ քամի չկար եւ արձակում էր մի բարձրագոյն ու աղիսողորմ ձայն, ինչպէս ապակեայ մի զանգակ : Թւում էր, որ ծառը գիտակցում էր թէ Ճէֆֆէր իրեն մօտեցել էր :

— «Երիտասարդ», ասաց ծերունին, ընտրիր այս խնձորներից որեւէ մէկին . եւ գիտացիր որ եթէ ընտրելով ուտես սպիտակ ինձորը, դու պիտի լինես բոլոր մարդկանց մէջ ամենախելացին, եթէ ընտրելով ուտես կարմրագոյնը, դու պիտի լինես հարուստ՝ Հրեայ Ռօշիւտի նման, եթէ ընտրելով ուտես գեղնագոյնը, դու

պիտի սիրուիս պառաւ կանանցից : Մաքումդ որոշիր, եւ մի յապաղիր : Մի ժամուայ ընթացքում, ինձորները թառամելու են, եւ ծառը ինքն էլ խորասուզուելու է երկրի լուս խորութեան մէջ : Ճէֆֆէր վար նայելով կշռաղատեց : «Ի՞նչպէս պէտք է շարժուիմ» . ասաց ցած ձայնով, իբր թէ ինքն իրեն հետ կը վիճարանէր : «Եթէ դու գառնաս շատ խելացի, գուցէ չի ցանկանաս ապրիլ եթէ դու գառնաս ոնեւէ մէկից աւելի հարուստ ամեն ոք քեզ նախանձելու է : Ես լաւ կ'անեմ, որ ընտրելով ուտես երրորդը, թառամած խնձորի» : Եւ այդպէս ալ արեց : Ծերունին ծիծաղեց մի անատամ ծիծաղով, ու ասաց - «Ո՞հ, իմաւտուն երիտասարդ դու ընտրել ես լաւագոյնը : Դու իրօք իմաստուն ես քան Սողոմոնը, եւ դու կարիք չունիս կարմիր խնձորին ... Դու առանց նրան էլ հարուստ պիտի լինես : Միայն թէ քո հարստութեանը ոչ ոք չի նախանձելու» :

«Ասա՛ ինձ, ծերունի մարդ, ո՞ւր է ապրում մեր խալիֆայի երկնքից պաշտպանուած յարգելի մայրը» հարցրեց Ճէֆֆէր ոգեւորուած :

Ծերունին մինչեւ գետին խոնարհելով, երիտասարդին մատնանշեց ճանապարհը : Ո՞վ Բաղդադում չի ճանաչում Տիեղերքի Լոյսին, մէծահոգի, հոչակաւոր Ճէֆֆէրին :

ՎԵՐՁԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Մենք մի ժամանակ, մտերիմ ու ջերմ բարեկամներ էինք . . . : Սակայն, մի չարադրւշակ ըոպէ եկաւ . . . : Եւ մենք բաժանուեցինք իրարից՝ որպէս թշնամիներ :

Անցան բազմաթիւ տարիներ . . . Եւ ժամանելով այն քաղաքը ուրնա անդրում էր, իմացայ թէ անբժշկելիօրէն ծանր հիւանդ էր նա եւ ցանկանում էր տեսնել ինձ :

Ես շտապեցի նրա մօտ : Մտայ իր սենեակը :

. . . Մեր աչքերը հանդիպեցին իրարու : Ես հաղիւ թէ ճանաչեցի նրան : Աստուած իմ, հիւանդութիւնն ինչպէ՞ս կերպարանափոխել էր նրան :

Դալկահար, կնճռուած, բոլորովին ճաղատ, եւ նօսրաշած սպիտակ մօրուքով, նա նստել էր առանց հագուստի, միայն մի շապիկով, որ մասնաւորապէս

պատուած էր . . . Նա չէր կարող տանել նոյն իսկ ամենաթեթեւ հագուստի ծանրութիւնն անգամ : Ինքնիրան թօթուելով, նա դէպ ինձ երկարեց իր սոսկալի վըտիտ ձեռքը, որ կարծես մաշած էր : Մեծ ճիգով մըրմնջեց մի քանի անորոշ խօսքեր - բարի գալուստի՞ն, թէ կշտամբանքի - ո՞վ կարող է ասել :

Նրա հիւծուած կուրծքը հեւում էր, եւ իր յուկուած աչքերի սպառած բիբերի վերեւից դժնդակօրէն գլորուեցան տանջանքի երկու արտասուքներ :

Սիրտս ճմլուեց . . . : Ես նստեցի իր կողքին մի աթոռի վրայ, եւ ակամայ աչքերս ձգելով զարհուրելի արհաւերքի վրայ, ես ինքս էլ երկարեցի իմ ձեռքը :

Բայց ինձ այնպէս թուեցաւ, որ իր ձեռքը չէր, որ բոնեց իմ ձեռքը :

Ինձ թուեցաւ, որ երկուսիս միջեւ նստել էր մի բարձրահասակ, անշարժ, գունատ կին, գլխից մինչեւ ոտքը ծածկուած երկար պատմուածանով : Նրա խոր, տժզոյն աչքերը նայում էին դատարկութեան մէջ եւ ոչ մի խօսք չէր լնուում նրա գունաթափ, անշարժ շրթներից :

Այս կինը միացրեց մեր ձեռքերը . . . : Նամեզ հաշտեցրեց :

Այս' . . . : Մահը մեզ հաշտեցրեց . . . :

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ

Մի մեծ քաղաքի մօտ, ընդարձակ ճանապարհի երկարութեամբ քայլում էր մի ծերունի հիւանդ մարդ, որ գողղողում էր քայլելիս: Նրա մաշած, տկարացած սրունքները կաղում, քաշում եւ սայթաքում էին, շարժում էին ցաւագինորէն եւ թոյլ կերպով, որպէս թէ նրանք իրան պատկանած չլինէին: Նրա ցնցուիանման հագուստները կախուել էին իր շուրջը, եւ չծածկուած զլուխը ծուել էր իր կրծքի վրայ...: Նա բոլորովին ուժասպառ էր եղել:

Նա նստեց մի քարի վրայ՝ ճանապարհի եղերքին, ծոռւց դէպի առաջ եւ իր արմուկները ծունկերին կրթնած՝ դէմքը ծածկեց իր ձեռքերի մէջ եւ իր կընճոռուած մատների միջից արտասուքը թափւեց վար, դորչ դեսնի վրայ:

Նա յիշում էր...:

Յիշում էր թէ՝ ինչպէս ինքն էլ զօրաւոր, հարուստ էր եղել, եւ թէ ինչպէս սպառել էր իր առողջութիւնը ու մսիւ իր հարստութիւնը ուրիշների, բարեկամների եւ թշնամիների վրայ...:

Եւ այժմ նա չունէր մի հացի փշրանք: Եւ բոլորն էլ, նոյն խոկ բարեկամները, լքել էին իրան, թշնամիների առաջ...: Նա պէ՞տք է, որ ընկճուէր ողորմութիւն խնդրելու: Իր սրտում դառնութիւն եւ անպատճութիւն էին տիրում:

Եւ արցունքները թափւում էին ու թափւում, ու բծաւորում գորշ գետինը:

Յանկարծ նա լսեց, որ մէկը կանչում էր իրան՝ իր անունով. Նա բարձրացրեց իր յոգնած գլուխը, եւ տեսաւ որ, իր առջն կանգնել էր մի օտարական:

Մի հանդարտ եւ լուրջ դէմք՝ բայց ոչ խոժոռ, չի ճառագայթող՝ բայց յատակ աշքեր, մի խորաթափանց նայուածք՝ բայց ոչ անկարեկից: «Դու վատնել ես քո բոլոր հարստութիւնը», ասաց նա, հանդարտ ձայնով... բայց դու ապահովապէս, չես զղացել քո արած լաւութեան համար»:

«Ես չեմ զղացել», պատասխանեց ծերունին՝ հառաջելով: «Բայց, այստեղ այժմ մեռնում եմ»:

— «Եւ եթէ մուրացիկներ ձեռք երկարած չլինէին քեզ, շարունակեց օտարականը, դու ոչ ոք պիտի ունենայիր ապացուցանելու, քո բարութեան մասին, դու չպիտի կարենայիր կստարել քո բարի գործը»:

Ծերունին ոչինչ պատասխանեց եւ մտախոհեց: «Այսպէս, դու ինչդ մարդ, հիմա էլ դու քեզ հպարտ չես զգում» — նորից շարունակեց օտարականը: «Գնա՛, մեկնիր ձեռքդ, եւ դու ինքդ էլ մի պատեհութիւն տուր՝ ուրիշ լաւ մարդկանց՝ գործով ապացուցանելու, որ նրանք բարի են, բարեսէր են»:

Ծերունին ցնցուեց, բարձրացրեց իր աշքերը ... բայց օտարականը արդէն աներեւութացել էր: Եւ հեռ-

ւից մի մարդ երեւցաւ, որ քայլում էր ճանապարհի
երկարութեամբ:

Ծերունին գնաց դէպի նրան եւ իր ձեռքը մեկնեց:
Մարդը մի խոժոռ կերպարանքով մէկ կողմ դարձաւ եւ
ոչինչ չտուեց:

Բայց նրանից յետոյ, մէկ ուրիշը անցաւ, եւ նա
ծերունիին տուաւ մի չնչին ողորմութիւն: Եւ ծերունին
արուած պղնձէ դրամներով գնեց իր համար հաց, եւ
մուրացկանութեամբ շահուած պատառը քաղցր էր թը-
տում իրան: Իր սրտում ամօթ չէր զգում, ընդհակա-
ռակը խաղաղութիւն ու ուրախութիւն եկան իր վրայ
երբ օրհնում էր նրան:

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Դւ մի տեսիլ էր . . .

Երկու հրեշտակներ երեւցան ինձ . . . երկու ոգի-
ներ: Ասում եմ հրեշտակներ, ողիներ, որովհետեւ եր-
կուսն էլ հագուստներ չունէին իրանց մերկ մարմին-
ների վրայ, եւ նրանց ուսերի ետեւում կանգնել էին եր-
կար զօրաւոր թեւեր:

Երկուսն էլ պատանիներ էին: Մէկը աւելի կլորիկ,
փափուկ ողորկ մորթով եւ թուխ խոպոպիքներով: Նրա
աչքերը թխագոյն եւ լեցուն էին խիտ թարթիչներով,
նայուածքը խորամանիլ, զուարթ եւ անձկալից էր:
Դէմքը զմայլելի, դիւթիչ, մի քիչ լպիրչ, եւ մի քիչ էլ
չար էր: Նրա լեցուն, բոսորագոյն շրթները թոյլ կեր-
պով գոզգոջում էին: Պատանին ժպտեց, որպէս ազդե-
ցութիւն ունեցող մէկը - ինքնավստահութեամբ եւ մեղ-
կութեամբ: Մի շքեղագեղ ծաղկի պսակ թեթեւորէն
հանգչում էր նրա փայլող խոպոպիքների վրայ, որ
գրեթէ դպչում էին նրա թաւշային թարթիչներին:

Ե՞ի պիստկուած ընձառիւծի մորթ գնդասեղուած մի սոկեղէն նետով, թեթևօքէն կախուել էր նրա կորացած ուսերից դէպի իր բոլորակածեւ ազդրերը: Իր թեւերի փետուրները վարդապոյն երանդներով էին, նրանց ծայրերը փայլուն եւ կարմիր, կարծես թաթախուած լինէին նոր թափուած բոսորագոյն արեան մէջ: Ժամանակ առ ժամանակ, նրանք արագ արագ շարժուած էին, մի ախորժելի արծաթեայ հնչումով, գարնանայն անձրեւի հնչումով:

Միւսը՝ վտիտ էր եւ իր մորթը գեղնագոյն իւրաքանչիւր անգամ չնչելիս, նրա կողոսկըները կարելի էր տեսնել թոյլ կերպով հեւալիս: Նրա մազերը բաց գոյն էին, ցանցառ եւ ուղիղ, աչքերը խոշոր, լեցուն, տըժոյն եւ գորշ էին... հայեացքը անհանդիստ եւ տարօրինակ կերպով փայլուն էր: Իր բոլոր կերպարանքը պակսած էր, վորքի կիսարաց բերանով, սրածայր ձկանման ատամներով, սեղմուած արծիւային քթով, դուրս ցցուած ծնոտով, եւ դէպի վար ծածկուած սպիտակեղէնով: Խանձուած ըրթները ոչ մի անգամ չի ժպտեցին:

Մի լաւ քանդակուած գէմք էր նա, բայց զարհութելի եւ անողորմ էր, թէեւ առաջինի գէմքը գեղեցիկ պատանին, քաղցր եւ հրապուրիչ էր, ինչպէս որ էր, նոյնպէս ցոյց չէր տալիս կարեկցութեան նշան: Երկրորդ պատանու գլխի շուրջը փաթաթուած էին մի քանի կոտորուած եւ եղիպտացորենի դասարկ հասկեր ուլորուած թառամած խոտածիւերով:

Գորշագոյն կոշտ հագուստը բոլորել էր նրա մէջը, թեւերը (ետեւում, մի աղոս գորշ գոյնով) շարժուում էր դաղղաղօրէն եւ սպառնալից:

Երկու պատանիները երեւում էին անբաժանելի ընկերներ: Երանցից իւրաքանչիւրը յենուել էր միւսի ուսի վրայ: Առաջինի վախուկ ձեռները դրուած էին խասովի ողկոյզի նման Երկրորդի ոսկրոս վզի վրայ, երկողովի ողկոյզի նման Երկրորդի ասկրոս վզի վրայ: Երկու թուլակազմ մատներուով վտիտ բազուկը իր երկար թուլակազմ մատներով կծկուած մի օձի նման առաջինի աղջկային կուրծքով կծկուած մի ձի նման առաջինի մի ձայն: Այս էր, ինչ որ ասուեց: «Քո առջեւ կանգնել են Սէրն ու Անօթութիւնը, երկուրեակ եղայլներ, երկու հիմնաքարերը բոլոր ապրող բաներում: Բոլորը, որ ապրում են շարժուում են գէպի առաջ սնունդ ստանալու, եւ սնունդը արտադրում է ձաղուկներ:

«Սէր և Անօթութիւն - նրանց նպատակը մէկ է, կեանքը պէտք չէ, որ գագարի, անհատական կեանքը, եւ ուրիշների կեանքը - նման տիեզերական կեանքին...»

ԻՆՉ ԳԵՂԵՑԻԿ ԻՆՉ ԹԱՐՄ ԷՒՆ ՎԱՐԴԵՐԸ

Մի տեղում, մի անգամ, շա՛տ, շատ տարիներ առաջ, ես կարդացի մի բանաստեղծութիւն որ չուտով մոռացուեց... բայց որի առաջին տողը դամուել է յեղութեանս մէջ:

«Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ քարմ էին վարդերը...»: Այժմ ձմեռ է, սառնամանիքը սառոյցով պատել է պատուհանիս փեղկերը, մութ սենեակում վառում է մի առանձնակեցուկ մոմ: Ես կծկուած նստեցի մի անկիւնում, եւ իմ գլխում այդ տողը չարունակում է արձագանգել ու արձագանգել՝

«Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ քարմ էին վարդերը...»: Եւ ես տեսնում եմ զիս ոռւսական մի գիւղաքաղաքի տան ցած պատուհանի առաջ: Ամառնային երեկոն յամրօրէն հալում էր գիշերուան մէջ, ջերմ օդը անուշաբոյր փաղաքում էր յափուկի ծաղիկներով: Եւ պատուհանում իր բազուկների վրայ յենած գլուխը, թեքուած իր ուսերի վրայ, նստած է մի դեսատի աղջիկ, լուռթեամբ ուշադիր ու անքթիթ նայում է երկինքին, որպէս թէ սպասում է նոր աստղերի գուրս դալուն:

Ի՞նչ պարզութիւն, ի՞նչ ներշնչում երազոս աչքերում, ի՞նչ յուղիչ անմեղութիւն հարցախնդիր բաժանեալ շրթներից: Ի՞նչպէս հանդարտօրէն շնչում է տա-

կաւին աճող, տակաւին չի յուղուող կուրծքը: Ի՞նչպէս մաքուր եւ քնքոյչ է լըջագիծը մատղաշ դէմքին:

Ես չեմ համարձակում խօսիլ նրան, բայց նա որքա՞ն սիրելի է ինձ համար: Ի՞նչպէս բարախում է սիրացու: «Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ քարմ էին վարդերը...»: Իսկ այսաւեղ, սենեակում, աւելի ու աւելի մթագնում է, մոմը վառում է աղօտ եւ կաթկթում է. պարուկ ստուերները գողգողում են ցած առաստաղում. անագորոյն սառնամանիքի ճարճատիւնը լսում է դրսից եւ ներսից, ախրագին մրմունջը վաղեմի կեանքից: «Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ քարմ էին վարդերը...»: Ահա իմ առջին բարձրանում են այլ պատկերներ: Ես լսում եմ գիւղի զուարթ տան կեանքի աղմուկը: Երկու խարտեաշ գլուխներ յենուած միմեանց մօտ՝ յանդդնութեամբ նայում են ինձ՝ իրանց փայլուն աչքերով վարդագոյն այտերը թրթում են զսպուած ծիծաղով: Զեռքերնին սեղմած են ջերմագին խանդաղատանքով, գեռատի բարի ճայները հնչում էին մէկը միւսի վրայ. այն ինչ, մի քիչ աւելի հեռուն, մի անգորը սենեակի ծայրում, ուրիշ նոյնպէս դեռատի ձեռքեր թուշում են անհմուտ մատներով մի հին դաշնամուրի ստեղների վրայ, եւ լաններովան շրջապարը անդօր է խլացնել նահապետական ինքնաբուի շչումը...»:

«Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ քարմ էին վարդերը...»: Մոմը պլազաց մարզուց...: Որո՞ւն է այդ խզդուկ եւ խորշ հազը: Գալարուած՝ իմ միակ բարեկամս ծեր շունս պառկած է ոտքերիս առաջ ու դողգողում է...»:

Ես մըսում եմ... ես սառում եմ... եւ նրանք բոլորը մեռած են... մեռած...»:

«Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ քարմ էին վարդերը...»:

ՎԱՐԴԸ

(Արտատպուած «Կոչնակ»էն)

Օգոստոսի վերջին օրերն է . . . : Աշունը արդէն համել է :

Արեւը մայր էր մտնում : Մի յանկարծական տեղատարափ անձրեւ առանց որոտումի եւ կարկուտի արագապէս անցաւ մեր ընդարձակ դաշտագետնի վրայից :

Տան առջեւ գտնուած պարտէզը շառադունեց եւ գոլորշուեց . բոլորը լեցուեց արեամուտի կրակով եւ անձրեւի հեղեղով :

Նէ նստել էր սեղանին մօտ , հիւրասենեակում , եւ մի տեւական երազոտութիւնով ակնկառոյց նայում էր կիսարաց դոնից դէպի դուրս , պարտէզը :

Ես գիտէի թէ ի՞նչ էր անցնում այդ վայրկեանին նրա հոգում : Ես գիտէի , որ մի կարճ , բայց տառապալից պայքարից յետոյ , նէ այդ բոսկում տեղի էր տալիս մի զգացողութեան , որ այլեւս չէր կարող տէր դառնալ :

Յանկարծ , նէ ոտի կանգնեց , արագօրէն գուրս գնաց պարտէզը , եւ աներեւութացաւ :

Մի ժամ սահեցաւ . . . մի մանրերկրորդ . . . նէ չէր վերադարձել :

Ապա , ես ոտի կանգնեցի , եւ դուրս ելնելով դըռնից , դարձայ դէպի այն ճանապարհը ուրկէ նա ընթացել էր - եւ որ այդ մասին կասկած չունէի . . . :

Բոլորը խաւար էր իմ շուրջը . գիշերը արդէն իջել էր : Բայց խոնաւ , աւագոտ ճանապարհի վրայ , մի բոլորանման պայծառ , կարմիր՝ առարկայ էր նշմարում , նոյն խի մտութուղի մէջից : Ես ծոռւեցի վար : Մի թարմ եւ նոր բացուած վարդ էր : Երկու ժամ առաջ ես տեսել էի այդ միեւնոյն վարդը նէրա կրծքում :

Ես ինամքով վերցրի ծաղկելը եւ գնալով ես դէպի իր սենեակը , դրի նրա սեղանին վրայ , իր աթոռի դիմացը :

Եւ այժմ , նէ վերջապէս վերադարձաւ : Նէրա դէքը՝ թէ՛ գունատ եւ թէ՛ փառվառն էր . նրա ակնկոր աչքերը մի կերպ փոքր էին երեւում եւ՝ արագահասութեամբ թափառում էին մի երջանիկ շփոթութեան մէջ մէկ ձողից միւրը :

Նէ տեսաւ վարդը խելով նրան՝ ակնարկ նետեց նրա ճզմուած , ցեխոտուած ծաղկաթերթերին , ու նայեց դէպի ինձ : Նրա աչքերը յանկարծակի մի անշարժութեան վերածուեցին , որոնք պայծառ էին արցունքով :

«Ճնշո՞ւ համար լաց է՞զ մէկում» , ես հարցրի : «Թէ ի՞նչո՞ւ , տեսէ՛ք այս վարդը . նայեցէք թէ ի՞նչ է պատահել նրան» :

Ապա , մտածեցի թէ յարմար է արտայայտելու մէկ խորիմաստ դիտողութիւն :

«Զեր արցունքները լուսանալու են ցեխը», և արտասանեցի մի նշանակալից բացատրութիւնով:

«Արցունքները չեն կարող լուսանալ. նրանք այլում են», նէ պատասխանեց:

Եւ դառնալով դէպի կրակարանը, նէ նետեց վարդը մեռնող բոցերի մէջ:

Կրակը այրում է աւելի լաւ, քան արցունքը», նէ աղաղակեց աշխուժութիւնով. ու նրա սիրուն աչքերը արցունքով տակաւին պայծառ, անվեհեր եւ երջանիկ կերպով ծիծաղում էին . . . :

Ես տեսայ, որ նէ էլ կրակի մէջ է եղել:



ՀՀ Ազգային գրադարան



NL0803026

